



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևացափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









31

ԱՊՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՒ ՀԱՄԱՐ  
ՄՂՎԱՀ ՊԱՅՔԱՐՈՒՄ

399

3-154

68

ՀՀՐ ՖՈՂՈՎԵԼՈՒԹԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
1930

1930

A I  
1279

Կոմիտեի. Ը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱռավարության

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

" 12/20 | 372

Ա. ԿՈՍՄԻԳԵՎ

Հայոց  
4-75

ՅԱԼԻԳՎԱՐ Է 1981 թ.

ՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՒ ՀԱՄԱՐ  
ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հ. 5364



ԺՈՂՈՎՈՐԴՅԱԲԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՅ.

Հ.Օ.

1930

Թարգմ. Վ. Մարտիրոսյան

~~945~~ A 1  
~~1279~~



Главлит № А. 64.826      Заказ 1183      Тираж 5000 экз.

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,  
Москва, Шлюзовая набережная, 10.

ԻՆՉՈՎ Ե ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՐԻՇ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Կուսակցության մեջ յերևան յեկող թեքումների եյությունը, ծագման պատճառները և այդ թեքումների դեմ պայքարելու անհրաժեշտությունը բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը և կոմյերիտականները կարող են պարզել իրենց համար միայն այն ժամանակ, յերբ մանրամասնորեն ուսումնասիրեն այն հարցը, թե ինչ եներկայացնում իրենից մեր կուսակցությունը, թե ինչու իր ամբողջ պատմության ընթացքում, սկսած իր ծնվելու հենց առաջին մոմենտից և վերջացրած սոցիալիզմի կառուցման շրջանով, բոյլշևիկների կուսակցությունը, պրոլետարիատի այդ խոկական կուսակցությունը, այդպես անհաշտ կերպով

պայքարել եւ և այժմ ել պայքարում եւ ամեն  
տեսակի և ամեն ձեի թեքումների դեմ:

Մեր կուսակցությունը հանդիսանում ե  
պրոլետարական կուսակցություն, բանվոր  
դասակարգի կուսակցությունը, այսինքն  
պրոլետարիատի առաջավոր տարրերի կազ-  
մակերպությունը: Իր ծրագրով, իր նպա-  
տակածղտումներով նա հանդիսանում ե հա-  
նուն կոմունիզմի, հանուն նրա կառուցման  
պայքարող մի կուսակցություն:

Մեր կուսակցության ծրագիրը նախա-  
տեսնում ե կոմունիզմի կառուցումը, յելնե-  
լով մարքսիզմի-լենինիզմի գիտական հի-  
մունքներից: Մարքսիզմը հանդիսանում ե  
կոմունիզմի կառուցման թեորիայի և պրակ-  
տիկայի գիտական հիմնավորումը և դասա-  
կարգային պայքարի ընթացքում մեր կու-  
սակցության համար ծառայում ե վորպես  
ուղեցույց, ղեկավարություն:

Հենց այս բոլորը հաստատում են այն,  
վոր մենք մի հասարակ խումբ չենք այն

մարդկանց, վորոնք հնարում են իրենց  
ծրագիրը, վորոնց հատուկ ե միայն յերա-  
զել, յերեակայել կոմունիզմի կառուցման  
մասին։ Մենք ուստոպիստներ չենք, վո-  
րոնք իրենց նղատակ են դնում անիրազոր-  
ծելի, անկատարելի խնդիրներ (մենք խո-  
սում ենք հայտնի ուստոպիստների՝ զիտական  
սոցիալիզմի նախորդների մասին)։ Մենք  
հանդիսանում ենք մի կուսակցություն,  
վորը մարգսիստական զիտության հիման  
վրա լուծում ե կոմունիզմի կառուցման  
խնդիրը, դասակարգերի վոչնչացման խնդիրը;  
ապագասակարգային հասարակություն ստեղ-  
ծելու խնդիրը։

Հենց այդ ե, վոր մեղ տարբերում ե  
ներկայումս գոյություն ունեցող մյուս  
կուսակցություններից։ Մենք ունենք այն-  
պիսի մի թեորիա, վորը դասակարգային  
ուժերի հարաբերությունների, մարդկային  
ամբողջ պատմության և հասարակության  
ճշգրիտ անալիզի հիման վրա զիտականո-

ըեն ապացուցում ե, վոր կոմունիզմը պետք  
ե կառուցվի: Մենք ունենք մեր ձեռքում  
մարքսիստական գիտություն, մի գիտու-  
թյուն, վորը հանդիսանում ե կապիտալիս-  
տական հասարակության անխուսափելի անկ-  
ման հզոր ապացույցը: Յեվ այդ գիտու-  
թյունը, այդ թեորիան մեր ձեռքում մի  
վերացական դոգմա չե:

Մեր կուսակցության մեջ մարքսիզմի-  
լենինիզմի թեորիան հանդիսանում ե ուղե-  
ցույց՝ հեղափոխական գործնեյության հա-  
մար և կուսակցության, պրոլետարիատի հե-  
ղափոխական պայքարի հիմքը: Մեր կու-  
սակցությունը հանդիսանում ե ամենահե-  
ղափոխականացնող գործոնը: Խնչպիսի պայ-  
մաններում բանվորական կուսակցությունը  
դադարում ե լինել հեղափոխականացնող  
գործոն: Այն ժամանակ, յերբ նա կորցնում  
ե կապը դասակարգի հետ, չի արտացոլում  
նրա ձգտումները, շահերը, յերբ կտրվում ե  
իր դասակարգից և բոլորովին դուրս ե

մղում Ամարքսիզմի հեղափոխական եյու-  
թյունը, Բանվորական կուսակցությունը  
կարող ե կորցնել իր հեղափոխական եյու-  
թյունը այնպիսի պայմաններում, յերբ նա  
դեն զցի դասակարգային պայքարը, մեղ-  
մացնի այն, յերբ մտածի, վոր կարելի յե-  
հասնել կոմունիզմին առանց պրոլետարիատի  
դիկտատուրայի, առանց դասակարգային  
պայքարի, առանց պրոլետարիատի դեկա-  
վարող դերի՝ դասակարգային պայքարում։

Այդպիսի պայմաններում բանվորական  
կուսակցությունը վերասերվելու յե։ Դրա  
հետևանքով նա կորցնելու յե իր հեղափո-  
խական եյությունը, ձգտումը և դառնալու  
յե հեղափոխական շարժման հետագա գար-  
դացումը խանգարող մի կուսակցություն։  
Ահա այդ ժամանակ մասսաների հեղափո-  
խական շարժումը աճելով սկսում ե առաջ  
անցնել այդ կուսակցությունից։

Դրա ամենամոտ որինակը — սոցիալ-դե-  
մոկրատիայի վերասերումն ե։ Սոցիալ-դեմո-

կրատիան, վորը պրոլետարիատի հեղափոխական շարժման արշալույսին հանդիսանում եր հեղափոխական մի կուսակցություն, վերասերման յերկար ճանապարհով գլորվելով, հասել ե սոցիալ-ֆաշիզմին, բանվոր դասակարգի շահերի՝ վոչնչով չքողարկված և բացարձակ դավաճանության։ Վերասերման յերկար ճանապարհի շնորհիվ, համաշխարհային սոցիալդեմոկրատիան պրոլետարիատի կուսակցությունից դարձել ե բուրժուազիային ոգնող մի կուսակցություն։

Բոյլշևիկյան կուսակցությունը չի վախենում այդ վտանգից շնորհիվ իր սկզբունքային հայացքների բյուրեղային մաքրության, շնորհիվ իր պողպատյա ամրության՝ այդ հայացքների պաշտպանության ժամանակ, շնորհիվ իր անխղելի կապի՝ մասսաների հետ։

Ի տարբերություն սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների, մեր կոմունիստական կու-

սակցությունը քննադատորեն ե  
մոտենում իր աշխատանքի հարցե-  
րին և չի հանդուրժում թեքում-  
ներ իր շարքերում, վորովհետեւ այդ  
թեքումները թուլացնում են կուսակցու-  
թյան մարտունակությունը, մղում են նրան  
քաղաքական սխալ ճանապարհի վրա:

Ի տարբերություն սոցիալ-դեմոկրատա-  
կան կուսակցությունների, մեր կուսակցու-  
թյունը թույլ չի տվել և թույլ չի  
տալիս վոչ մի հաշտվողականություն հան-  
դեպ այն ամենի, վոր այս կամ այն չափով  
խորթ ե հանդիսանում կուսակցության գծին:

Յեվ հենց դրա շնորհիվ ե, վոր մեր  
կուսակցությունը հանդիսանում ե բոյլշեկ-  
յան կուսակցություն և իր զարգացման թե  
անցյալում, թե ներկայում ամբողջ ժա-  
մանակ պայքարել ե և պայքարում  
ե ընդդեմ ոպորտունիզմի, վորտեղից  
ել վոր նա առաջ դա և վորտեղ ել վոր  
յերեան դա:

Մեր կուսակցությունը յերբեմն թույլ  
տալով կոմպըռոմիսներ իր հեղափոխական  
ստրատեգիայի ավելի լավ իրականացման  
շահերի համար, յերբեք չի կանգնում բուր-  
ժուազիայի հետ հաշտվելու ճանապարհի  
վրա, անհաշտելի հակասությունների կոկ-  
ման ճանապարհի վրա, հակասությունների,  
վորոնք գոյություն ունեն յերկու, միշտ  
միմիանց հետ թշնամի դասակարգերի—  
պրոլետարիատի և բուրժուազիայի միջև:  
Յեվ հենց դրա համար ե, վոր մեր կուսակ-  
ցությունը այդպիսի դաժանությամբ, իր հե-  
ղափոխական յեռանդի ամբողջ ուժով հար-  
ձակվել ե և հարձակվում ե այն բոլոր փոր-  
ձերի վրա, վորոնք արվում են կուսակցու-  
թյան գլխավոր գիծը «Թեթև» կերպով շտկե-  
լու և «մի փոքր» այդ գծից նահանջելու հա-  
մար: Իսկ այդպիսի փորձեր շատ են յեղել  
և անցյալում, և այժմ. անտարակույս այդ  
փորձերը կատարվելու յեն կուսակցության  
նաև հետագա կյանքում:

Դրա շնորհիվ մեր կուսակցությունը  
գտնվում է անընդհատ պայքարի մեջ ընդ-  
դեմ այն ամենի, ինչ վոր խորթ և հանդի-  
սանում ալրոլետարիատի գաղափարախոսու-  
թյանը, պայքարի տակտիկային, վարքա-  
դին։ Այդ պայքարը, նայած կացությանը,  
զանազան և առանձին ետապներում ավելի  
սուր և լինում։ Վորպես որինակ կարելի յե-  
ցույց տալ սուր բնույթը կուսակցության  
ներկա պայքարի՝ ընդդեմ աջ ոպորտու-  
նիստների։

## ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Վ՞րտեղ են թագնված այն դրդառիթ-  
ները, այն պատճառները, վորոնք մեր կու-  
սակցության մեջ առաջ են բերում թե-  
քումներ։

Պրոլետարիատի կուսակցությունը պայ-  
քարում և հանուն կոմունիզմի՝ լայն մանր-  
քուրժուական ողակման առկայության պայ-

մաններում։ Պրոլետարիատի պատմական  
սլայքարում՝ ընդդեմ կապիտալիստների, մանր  
բուրժուազիան հեղափոխա ան պայքարի վո-  
րոշ փուլերում կարող ե խաղալ և խաղա-  
ցել ե հեղափոխական ուժի դեր։ Սակայն  
մանր բուրժուազիան ունի յերկու յերես,  
յերկու կողմ։ Մի յերեսը — դա մանր սե-  
փականատիրոջ յերեսն ե, և այդ կողմը  
մանր բուրժուազիային մոտեցնում ե կա-  
պիտալիստներին, կապիտալիզմին, վորին նա  
սնում ե և վորով սնվում ե։ Մյուս յերեսը —  
դա յերեսն ե այն մանր բուրժուայի, վո-  
րին քայքայում և ճնշում ե կապիտալիզմը,  
և դա մանր բուրժուազիային մոտեցնում ե  
պրոլետարիատին, վորոշետապներում դրդում  
ե նրան պայքարի յելնել կապիտալիզմի դեմ։  
Ինչպես հեղափոխական պայքարի վորոշ փու-  
լերում մանր բուրժուազիան հանդիսա-  
նում ե պրոլետարիատի ուղեկիցը,  
այնպես ել մյուս փուլերում նա իր դրու-  
թյան յերկվության շնորհիվ դառնում ե կա-

պիտալիդմը ուժեղացնող գործոն:

Մանր բուրժուազիան, մանր-բուրժուազիան ողակման առկայությունը — տնտեսության մասնավոր-կապիտալիստական սեկտորը — ահա հիմնական պատճառներից մեկը, վորը առաջ երերում յերերումներ բանվոր դասակարգի մեջ և թեքումներ՝ կուսակցության ներսում։ Հենց այստեղից ե, վոր մանր-բուրժուական աշխարհայացքը թափանցում ե պրոլետարիատի և կուսակցության միջավայրը։ Հենց այդ մանր-բուրժուական ողակումն ե, վորը գոյություն ունի մեզ մոտ և դեռ բավական ժամանակ գոյություն ե ուենալու, վոր հնարավորություն ե ստեղծում մանր-բուրժուական ազդեցությունների համար, պրոլետարիատի և կուսակցության ներսում մանր-բուրժուական աշխարհայացքի թափանցման համար։

Յեթե ավելի խորը մոտենանք այս հարցին, ապա կտեսնենք, թե ինչպես բանվորները իրենց առորյա կյանքում ամեն որ հան-

դիպում են այդ մանր արտադրողների հետ:  
Ինքը պրոլետարիատը պատմականորեն առաջ  
ե յեկել հենց այդ սոցիալական միջավայրից:

Ահա թե ի՞նչ ե գրում այդ առթիվ ընկ. Լե-  
նինը, խոսելով ոեվիզիոնիզմի մասին. «Ամեն  
մի կապիտալիստական յերկրում, պրոլետա-  
րիատի հետ կողք-կողքի միշտ կանգնած են  
մանր բուրժուազիայի, մանր տերերի լայն  
խավեր. Կապիտալիզմը, բանվոր դասակարգը  
շարունակ ծնվում են մանր արտադրությու-  
նից: Կապիտալիզմը անխուսափելիորեն նո-  
րից ստեղծում ե միջին խավերի մի ամբողջ  
շարք, ֆարբիկների ճյուղերը, աշխատանքը  
տանը, մանր արհեստանոցները ցրված են  
ամբողջ յերկրում:

Այդ մանր արտադրողները նմանապես  
անխուսափելիորեն վերստին շպրտվում են  
պրոլետարիատի շարքերը: Միանդամայն բնա-  
կան ե, վոր մանր-բուրժուական աշխարհա-  
յացքը կը կին և կրկին ներս ե խուժում բան-

վորական կոսակցությունների շարքերը»  
(Լենին, հատ. XI, մաս 2-րդ):

Բնկ.. Լենինը այստեղ շատ ցայտուն կերպով բաց ե անում բանվոր դասակարգի, պրոլետարիատի միջավայրը մանր-բուրժուական աշխարհայացքի թափանցելու ամբողջ մեխանիկան: Մեր կուսակցության վրա ևս մանր բուրժուազիան ճնշում ե գործում հին ապարատի մնացորդների միջոցով, բուրժուական մասնագետների միջոցով, մանր բուրժուազիայի խավերի միջոցով, խավերի, վորոնց հետ շփովում են պրոլետարիատը և մեր կուսակցությունը:

«Վորովինետե, — ասում ե Լենինը, — աշխարհում (նաև մեզ մոտ ԽՍՀՄ-յան մեջ. Ա. կ.) մանր արտադրությունը դժբախտաբար, տակավին շատ և շատ ե, իսկ դա ունի այն քաղաքական նշանակությունը, վոր մանր ապարանքարտադրողների հսկայական մասսաները պրոլետարիատին ամեն կողմից շրջապատում են մանր-բուրժուական տարերքով,

համակում և այլասերում են նրան այդ տարերքով, պրոլետարիատի ներսում շարունակ առաջ են բերում մանր-բուրժուական դիմագրկություն, ցրվածություն, ինդիվիդուալիզմի ռեցիդիվիզեր, անցումն վոգենրությունից վհատության գիրկը։ (Լենին, հատ. XVII, եջ 136):

### ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌԻԹՅԱՆ ՄԵԶ ՅԵՐԵՎԱՆ ՅԵԿԱՇ ԹԵՔՌԻՄՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ս.յդ արմատները նույն են, ինչ կուսակցության մեջ։ Տարբերությունը միայն այն է, վոր դրանք կոմյերիտմիության մեջ կարող են ավելի սուր կերպով յերևան գալ, վորովհետև կոմյերիտմիությունն ավելի շատ եյնթակա մանր-բուրժուական ճնշմանը, քան կուսակցությունը։ Ի՞նչու։ Այն պատճառով, վոր մենք, վորպես դաստիարակող կազմակերպություն, կոչված ենք ավելի խոշոր չափերով ընդգրկել աճող սերնդի բազմապիսի սոցիալական շերտերը։

Մեզ մոտ կոմյերիտմիության մեջ մեծ  
մասը — դա գյուղացիական յերիտասարդու-  
թյունն է։ Իսկ կուսակցության մեջ — ընդ-  
հակառակն է։ Մտածենք այս մասին, և դա  
շատ բան ե պարզելու մեզ համար։ Մենք  
կոչված ենք վերադաստիարակել գյուղացիա-  
կան յերիտասարդության բազմամիլիոն մաս-  
սաները, քաշելով այդ յերիտասարդությանը  
մեր շարքերում անհամեմատորեն ավելի խո-  
շոր չափերով, քան դա կարող ե անել կու-  
սակցությունը, քանի վոր նա մեր յերկրում  
դեկավար դերումն է։ Այդ արմատները, հե-  
տևաալես, մեր միության ավելի լայն սոցիա-  
լական կազմի մեջ են։ Յերիտասարդությունը  
և կոմյերիտմիությունը ավելի քիչ են կռած-  
ու կոփված, դասակարգայնորեն ավելի քիչ  
են ձեակերպված, ավելի քիչ դասակարգա-  
յին կայունություն ունեն, քան մեր կռւ-  
սակցությունը։ Մենք ավելի քիչ ենք փորձ-  
առու դասակարգային պայքարի տակտիկայի,  
ստրատեգիայի և քաղաքականության հար-

ցերում. Դա հնարավորություն ե տալիս,  
վոր մանր - բուրժուական աշխարհայացքը  
ավելի մեծ սրությամբ թափանցի մեր շար-  
քերը, քան կուսակցության ներսում. Մենք  
տակավին չենք սովորել հարկ յեղած չա-  
փով գործել հեղափոխական թեորիայի զեն-  
քով։ Դա մեր ամենաթույլ կողմն ե. Մենք  
տակավին չենք կարող մոտենալ յերևույթ-  
ների բացատրությանը, ընդհանրացմանը,  
այդ յերևույթների բնույթի և ծագման պատ-  
ճառների ուսումնասիրությանը մարզսիզմի  
գիտական մեթոդոլոգիայով։ Մենք տակա-  
վեն չենք կարող հարկ յեղած չափով դիա-  
լեկտիկորեն անհրաժեշտ հետևություններ  
կատարել մեր ամենորյա կոմունիստական  
պրակտիկայի համար։

Ահա այս բոլորը հնարավորություն են  
տալիս, վոր մանր-բուրժուական աշխարհա-  
յացքը ավելի սուր ձևով թափանցի յերիտա-  
սարդության մեջ, մեր կոմյերիտմիության  
մեջ։

Յեթե խոսենք արդի դրության մասին,  
ապա չի կարելի լուսությամբ անցնել նաև այն-  
պիսի մի պատճառ, վորպիսին եւ բանվորական  
յերիտասարդության վոչ միատեսակ կազմը:  
Բանվորական յերիտասարդության մեջ մենք  
նկատում ենք խմբակներ այսպես կոչված  
բանվորական այնպիսի յերիտասարդության,  
վորը շատ քիչ ժամանակ եւ ինչ գտնվում ե  
արտադրության մեջ, վորը մտել եւ արտա-  
դրության մեջ վոչ պրոլետարական միջա-  
վայրից: Վերցրեք այնպիսի մի խոշոր ար-  
դյունաբերական բանվորական կենտրոն, ինչ-  
պիսին եւ Ուրալը: Մի քանի որ առաջ, յերբ  
մենք ստիպված սկսեցինք ուսումնասիրել  
այն հարցը, թե ինչն եւ պատճառը, վոր Լիս-  
յեվում 100 հարվածային բրիգադներ քայ-  
քայվել են, յեկանք այն յեզրակացության,  
վոր հարվածայինների 80%-ը (այդ 100 հար-  
վածային բրիգադների թվից) հանդիսանում ե  
այնպիսի բանվորական յերիտասարդություն,  
վորը մի տարի յել չկա ինչ գտնվում ե ար-

տաղըության մեջ։ Յեկ կլոր թվով բանվուրական յերիտասարդության 50%-ը (նորից հարվածայինների նույն թվի նկատմամբ) յերկու տարուց ել պակաս ե ինչ գտնվում ե արտադրության մեջ։

Այդպիսի բազմազան կատեգորիաների և խավերի առկայությունը բանվորական յերիտասարդության մեջ, լցնում ե նրա միջակայրը բազմերանգ տարրերով, նույն թվում և վոչ պրոլետարական շրջանից դուրս յեկածներով։ Այդ ևս հանդիսանում ե մեկն այն հանգամանքներից, վորոնք դյուրացնում են մանր-բուրժուական ազդեցությունների և թեքումների թափանցումը կոմյերիտմիության մեջ։

Կուսակցության մեջ առաջացած թեքումների ծագման պատճառների անվամ այսպիսի կարճ դիտումը տալիս ե պատկերացում՝ այն մասին, թե ինչու մեզ մոտ, մեր կուսակցության մեջ այդպիսի վճռական հակահարված ե տրվում ամեն մի թեքման։

Մի շարք ընկերներ վախենում են ներկու-  
սակցական պայքարի սրությունից, և շատ հա-  
ճախ յերիտասարդության մեջ կարելի յե նկա-  
տել այդ պայքարի ծագման պատճառների ան-  
ըմբռնումը։ Վոմանք հակումն ունեն ներկու-  
սակցական պայքարը բացատրել կուսակցու-  
թյան առանձին ղեկավարների չար կամքով և  
նրանով, վոր իբր թե նրանց միջև գոյություն  
ունեն վատ անձնական փոխարարերություն-  
ներ։ Այդպես կարող են մտածել միայն յե-  
րիտասարդ այն ընկերները, վորոնք գաղա-  
փար չունեն կուսակցության պատմության  
և այն մասին, թե բոյլշիզմը ինչպիսի թե-  
քումների դեմ պայքար մղելով ե կովել ու  
կոփել։ Այդպես կարող են մտածել միայն  
արիվատելները, սահմանափակ խելքի տեր  
մարդիկ, վորոնք չեն հասկանում ներկու-  
սակցական պայքարի եյությունը և ամեն  
ինչ բացատրում են «միմիանց վոտի տակը  
փորելով» և այլ անհիմն ու անզոր վաս-  
տարկումներով։

Այդ «բացատրությունը» վոչ մի չափով  
չի կարող մարգսիստական բացատրություն  
լինելու հավակնություն ունենալ։ Այն բո-  
լորը, ինչ վոր մենք ասել ենք մինչև հիմա,  
ամենայն ակնհայտությամբ խփում և հար-  
վածում ե աբիվատելյան դատարկաբանու-  
թյունները կուսակցության և կոմյերիտմիու-  
թյան շարքերում թեքումների յերևան զա-  
լու պատճառների մասին։ Դա ներկուսակ-  
ցական պայքարի հարցի կոպիտ և սխալ պար-  
զացումն ե։ Նման բացատրությունների»  
դեմ մենք պետք ե պայքարենք։ Այդպիսի  
պարզացումը վոչ այլ ինչ ե, բայց յեթե  
անգրագիտություն։ Այդ պարզացումը անց-  
նում ե ներկուսակցական պայքարի սկզբուն-  
քային եյության կողքովը, չի հասկանում  
իմաստն այս կամ այն սկզբունքային հար-  
ցերի, վորոնց առթիվ պայքար ե տեղի ունե-  
նում կուսակցության մեջ։

Մեր կուսակցությունը ծնվել, կռվել և  
կոփվել ե պայքարի մեջ, իր կառերը հա-

վաքել և կազմակերպել ե կուսակցության  
գծի հղկման և սրման պրոցեսի մեջ, նա մի  
ամբողջ պարոց ե անցել, հանուն բոյլշեիզմի  
մղած պայքարի հսկայական, հարուստ դպրոցը:  
Վերն ե բոյլշեիզմի տրադիցիան թեքումների  
դեմ մղած պայքարում։ Դա ամենից առաջ  
մարքսիստական հեղափոխական թեորիային  
հավատարիմ լինելն ե, մարքսիստական-լե-  
նինյան պայքարը ընդդեմ ամեն տեսակի և  
ամեն մի ռեվիզիոնիստական փորձերի, պայ-  
քարը հանուն կուսակցության գծի մաքրու-  
թյան, պարզության և անաղարտության։  
Բոյլշեիկների կուսակցությունը  
իր քաղաքական գծի խնդրում չի  
կարող հանդուրժել կեղծություն  
և վոչ մի տոկոսով։ Լենինիզմի կարևո-  
րագույն սկզբունքներից մեկն ե հանդիսա-  
նում անհաշտվողականությունը՝ կուսակցու-  
թյան գծից, կուսակցության ծրագրից, ծրա-  
գիրը կենսագործելու տակտիկայից շեղվելու  
դեմ մղած պայքարում։ Յեթե մյուս բոլոր

կուսակցությունների գծի մեջ, տակտիկայում տեսնում ենք որդանական մշտական ցանկություն՝ ընդհանուր լեզու գտնել հակառակության հետ, ապա բոյլշեիկյան կուսակցության միշտ ել պայքարել ե հանուն իր գծի բացարձակ քաղաքական հստակության և մաքրության։ Այդ մասին վկայում են. պայքարը ընդդեմ եկոնոմիզմի, տարածայնությունները մենշեիկների հետ 1903 թ. հիմնական հարցերի շուրջը, պայքարը ընդդեմ սոցիալ-դեմոկրատների, վորոնք 1914 թվին, իմալերիալիստական պատերազմի ծագման ժամանակ բացահայտորեն դավաճանեցին պրոլետարիատի շահերը, պայքարը ընդդեմ մանրբուրժուական կարծեցյալ հեղափոխականության, ընդդեմ այսպես կոչված ձախ կոմունիստների 1918 թվին Բրեստի հաշտության հարցի առթիվ և, վերջապես, տրոցկիզմի դեմ պայքարելու ամբողջ շրջանը և պայքարը ընդդեմ աջ ոպողիցիայի, վորը հանդիսանում է գլխավոր վտանգը ներկա ետապում, ան-

Խոնջ պայքարը հանուն մարքսիզմին և նինիզմի  
սկզբունքային հստակության, ամենադաժան  
և կատաղի պայքարը ընդդեմ այն բոլոր տե-  
սակի ռեվիզիոնիստական փորձերի, վորոնք  
արվում են աջից կամ «ձախից» մարքսիզմ-  
և նինիզմը շտկելու համար, անհանդուրժո-  
ղականությունը հանդեպ ամեն մի զաղա-  
փարական յերերումների, պայքարը հանուն  
կուսակցության միատարրության և միա-  
ձուլության, — ահա զինապահեստը բոյլշեիկ-  
յան տրադիցիաների, վորոնք տարբերում  
են մեր կուսակցությունը մի ամբողջ շարք  
ուրիշ, այսպես կոչված «բանվորական» սո-  
ցիալ-դեմոկրատական կուսակցություններից,  
վորոնք զլորվել են սոցիալ-ֆաշիզմի զիրկը  
և դարձել սոցիալ-ֆաշիստներ։ Լենինյան կոմ-  
յերիտմիությունը պետք է վերընդունի կու-  
սակցության բոյլշեիկյան տրադիցիաները։  
Լենինյան կոմյերիտմիությունը ունի ժամա-  
նակով վոչ շատ յերկար, բայց դեսպերով  
վերին աստիճանի հարուստ մի պատմու-

թյուն։ Լենինյան կոմյերիտմիության պատմության մեջ ևս վերապրող փուլի յուրահատկությունը տվել է իր արտացոլումները յերերումների, թեքումների և խոտորումների ձևով։ Նման յերեսույթների թվին են պատկանում մեր մի շարք պատմական վեճերը, դիսկուսիաները։ Մենք այժմ նպատակ չունենք մանրամասն պարզաբանելու կոմյերիտմիության պատմության, նրա ներսում տեղի ունեցած պայքարի խնդիրը։ Սակայն մենք վերին աստիճանի անհրաժեշտ ենք համարում լուսաբանել այդ պատմության մի քանի առանձին մոմենտները։ Դրանցից ամենակարևորներն են հետևյալները։ Դունայեվսկու առաջարկը 1919 թվին՝ բանվորական յերիտասարդության խորհուրդներ և պրոֆմիություններին կից յերիտասարդական սեկցիաներ կազմակերպելու մասին, 1920—21 թվերի դիսկուսիան ուկրայինցիների հետ, վորը (դիսկուսիան) այն ժամանակ ստացավ և վեճ կոմյերիտմիության շարքերի դասակարգայ-

նության և մասսայականության առթիվ»  
անունը և ուկրայինական ընկերների առաջարկը կոմյերիտական բջիջների շուրջը բանվորական յերիտասարդության անկուսակցական կոլեկտիվներ ստեղծելու մասին։  
Այդ բոլոր դիսկուսիաները կարենու են վոչ  
միայն վորպես վորոշ պատմական ետապներ։  
Նրանք վերին աստիճանի մոտիկ հարաբերություն և նշանակություն ունեն ներկա որերի հարցերում կոմյերիտմիության դիմքը վորոշելու համար։

Նայեցեք ուկրայինների՝ առաջին հայցքից «անմեղ» թվացող առաջարկին՝ կոմյերիտական բջիջների շուրջը բանվորական յերիտասարդության անկուսակցական կոլեկտիվներ ստեղծելու մասին։ Նման կոլեկտիվների ստեղծումը նրանք պատճառաբանում են նրանով, վոր մեր միությունը բավարար չափով մասսայական չեւ չի ընդգրկում (և, իրենց կարծիքով, չպետք եւ ընդգրկի) բանվորական յերիտա-

սարդության դգալի մասը։ Ինչ պետք է դառնար միությունը, իրենց կարծիքով, յեթե վոչ՝ յերիտասարդության լայն մասսայական կազմակերպություն։ Ուկրայինացիների 1921—1920 թվերի «անմեղ» առաջարկությունները միությունը ուղղակի հասցնում եյին նրան, վոր նա վերածվեր յերիտասարդական կոմունիստական կուսակցության, և այդ դեպքում կոմկուսի շուրջը համախմբված յերիտասարդության այդ անկուսակցական կոլեկտիվները բնականաբար պետք ե դառնային յուրահատուկ կոմյերիտմիության նման մի բան։

Այս ե այդ առաջարկությունների քաղաքական եյությունը։ Յեվ կամ—յերիտասարդության խորհուրդներ, պրոֆմիություններին կից յերիտասարդական սեկցիաներ ստեղծելու առաջարկությունը։ Գործնականորեն այդ առաջարկությունները տանում եյին դեպի յերիտասարդության անջատումը պրոլետարիատի ընդհանուր պայքարից։ Այդ

առաջարկությունները բացահայտ սինդիկալիստական բնույթ ունեն: Այդ սինդիկալիստական ճանապարհով միությունը չգնաց:

## ԴՈՒՆԱՅԵՎՇՉԻՆԱ

Ի՞նչի հետևանք եյին այդ բոլոր առաջարկությունները:

Պրոլետարիատի ղիկտատուրայի ընդհանուր սիստեմում կոմյերիտմիության տեղը չհասկանալու հետևանք: Այդ առաջարկություններն անող ընկերները չեյին հասկանում, վոր կոմյերիտմիությունը իր բնույթով հանդիսանում է կուսակցության փոխանցող շղթաներից, փոկերից մեկը:

Միության պատմության մեջ կոմյերիտմիության և կուսակցության փոխհարաբերությունների բոյլշեիկյան հիմունքները չհասկանալու որինակներ և դեպքեր շատ ենյեղել: Դունայեվսկու կողմնակիցները (Որլովից) կուսակցության հետ ունեցած փոխհարա-

բերությունների հարցի մասին կաղմած  
իրենց թեղիսներում առաջազրում ելին  
նույնիսկ հետեւյալ առաջարկները. «Միու-  
թյան տեղական կոմիտեները Ռուսկոմկուսի  
տեղական որդանների հետ աշխատում են  
վորպես միմիանց հետ պայման կնքող կող-  
մեր», Դունայեվսկին առաջարկում եր, վոր-  
պեսզի ինքը միությունը «իր անդամ-  
ների ազատ կամքի հայտնման միջոցով»  
վորոշի «իր վերաբերմունքը ինչպես ընդ-  
հանուր քաղաքական, այնպես ել յերիտա-  
սարդության կյանքի զանազան ընազավառ-  
ների և իր աշխատանքի ձևերի ու ճանա-  
պարհների հարցերի նկատմամբ»: Այստեղ  
առանձին բացատրություններ տալու կարիք  
չկա: Ի՞նչն ե գլխավորն այդ բոլոր սխալ  
առաջարկությունների մեջ, առաջարկու-  
թյունների, վոր անում ելին Դունայեվսկին,  
վերջինիս ծրագիրը պաշտպանող ընկերները  
Որլովից, ուկրայինական այսպես կոչված զա-  
սակարգայիները և այլն: Ամենից առաջ դա յե-

ըիտասարդական սինդիկալիզմ ե, այսինքն յե-  
րիտասարդությանը պըոլետարիատի պայքա-  
րի ընդհաննուր խնդիրների կենսագործումից  
առանձնացնելը, յերիտասարդությանը պըո-  
լետարիատի չափահաս կադրերին հակադրելը,  
յերիտասարդությունը բանվոր դասակարգի  
պայքարի ընդհաննուր սիստեմից հանելը և  
առանձին կուսկագմակերպության մեջ կազ-  
մակերպելը, կուսակցության հետ ունեցած  
փոխհարաբերությունների սխալ ըմբռնումը  
և սլրուետարական դիկտատուրայի փոխան-  
ցող շղթաների ընդհաննուր սիստեմում կոմ-  
յերիտմիության բռնած տեղի սխալ պատկե-  
րացումը։ Այս բոլորն իմի վերցրած վոչ  
այլ ինչ եյին, յեթե վոչ ձախ խոտորում-  
ների, կարծեցյալ-հեղափոխական արամա-  
դրությունների, ձգտումների յուրատեսակ  
արտահայտություն հեղափոխության այդ  
շրջանում։ Այդ բոլոր կարծեցյալ-հեղափո-  
խական առաջարկությունները բանվորական  
ոպովիցիային հարակատ առաջարկություն-

ներ եյին։ Ահա ձախ խոտորութնների ար-  
տահայտությունը կոմյերիտմիության մեջ  
այդ շնորհանում։

## ԱՎԱՆԳԱՐԴԻՉՄԻ ԹԵՌՈՒԱՆ

Յերտասարդական շարժման պատմու-  
թյան մեջ մենք ունեցել ենք և հիմա յել  
ունենք խոշորագույն մի յերեսույթ—ավան-  
դարդիզմի թեորիան,—վորի քննարկման վրա  
ցանկանում ենք ավելի հանդամանորեն  
դարձնել կոմյերիտականների և մեր ակ-  
տիվի ուշադրությունը։

Սոցիալ-դեմոկրատիայի բացահայտ դա-  
վաճանությունից հետո, միջազգային պրոլե-  
տարական հեղափոխական շարժման մեջ  
միակ հեղափոխական տարրը եյապես և  
փաստորեն մնացին յերիտասարդական միու-  
թյունները (իհարկե բացի Ռուսաստանից,  
վորտեղ ընկ. Լենինի գլխավորությամբ գոյու-  
թյուն ուներ բոյլշևիկյան կուսակցությունը)։  
Պատմական անհրաժեշտության ուժի հետե-

վանքով այդ ժամանակ և այդ պայմաններում յերիտասարդական միությունները կոչված եյին լինելու պլուտարիատի հեղափոխական ձգտումների ավանգուրդը։ Հենց յերիտասարդության սոցիալիստական կազմակերպություններն եյին, վոր Լենինի և Նիբջնեխտի ղեկավարությամբ պայքարում եյին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ուղղութունիզմի դեմ։ Այն ժամանակվա պայմաններում դա բնականոն եր և «Յերիտասարդության ինտերնացիոնալ» ժուրանալում արժանացավ Լենինի հավանությանը։ Սակայն դրանից հետո սկսվեց նոր շրջան, մի շարք յերկրներում կոմունիստական կուսակցություններ ստեղծելու շրջանը, և ավանգարդիզմի այդ դիճը, կոմկուսների առկայությամբ, վերաճելով անցավ իր հակառակությանը։ Բանն այն է, վոր յերիտասարդության մի շարք սոցիալիստական կազմակերպություններ չկարողացան հաշվի առնել այն բոլոր փոփոխությունները, վորոնք տեղի

ունեցան պրոլետարիատի պայքարի պայման-  
ներում, իսկ այդ փոփոխությունների թվին  
պատկանում եր և այնպիսի զորեղ մի գոր-  
ծոն, վորպիսին եր կոմկուսների ստեղծումը  
զանազան յերկրներում։ Յերիտասարդու-  
թյան կազմակերպությունները սոցիալ-դե-  
մոկրատիայի հանդեպ ունեցած իրենց վե-  
րաբերմունքը սկսեցին մեքենայորեն գործա-  
դրել նաև կոմկուսների նկատմամբ, ըունել  
«ձախ» դիրք և փորձ անել շտկել կուսակ-  
ցության գիծը «ձախից»։ «Մենք ավելի ձախ  
ենք ըոլոր կուսակցություններից անխտիր»։  
Ահա թե ինչն ե բնութագրում ավանդարդիստ-  
ներին, ավանդարդիզմի թեորետիկներին յե-  
րիտասարդական շարժման մեջ վոչ հեռու  
անցյալում։ Հերնլեն, այդ հարցի այդպիսի  
թեորետիկներից մեկը, գրում եր. «Յերի-  
տասարդության սոցիալիստական շարժումը  
միանգամայն իրավունք ունի յերբ պահան-  
ջում ե, վոր իրեն ել հաշվեն վորպես  
ինքնուրույն իրավահավասար անդամ պայ-

քարող պրոլետարիատի ընդհանուր մարտական բանակում:

Առանձին բացատրությունների կարիք չկա: Ի՞նչ ենք մենք այստեղ տեսնում: Մեր կուսակցությունների ղեկավարող դերի, ղեկավարող նշանակության բացասումը, ժըստումը:

Հերնլեն շաբունակում ե. Շնա (այդ շաբժումը: Ա.Կ.) չի կարող գտնվել կուսակցությունից դուրս, սակայն և չպետք ել լուծվի կուսակցության շուրջը, պրոլետարիատի չափահաս սերնդի մասսան յերբեք ել ընդունակ չել լինելու յերիտասարդության դաստիարակողը և առաջնորդը, ավելի շուտ յերիտասարդությունը մեծերի զվիթ վրայով պետք ե հասնի ավելի բարձր աստիճանի:

Ահա ձեզ մեր կոմունիստական կուսակցությունների հեղափոխականացնող նշանակության և հեղափոխականացնող դերի թերագնահատման մի նոր և վերին աստիճանի ցայտուն արտահայտություն: Այստեղ շատ

պարզ կերպով հանդես եւ գալիս յերիտասարդության միությունների՝ սոցիալ-դեմոկրատիայի հանդեպ անցյալում ունեցած վերաբերմունքի մեքենայական գործադրումը ներկայումս գոյություն ունեցող կոմունիստական կուսակցությունների նկատմամբ:

Ավանդաբերիմի թեորիան իր քաղաքական եյությամբ, կոմունիստական կուսակցությունների առկայության պայմաններում, հանդիսանում ե կարծեցյալհեղափոխական, մանր-բուրժուական, կեղծ-ձախ, անարխոսինդիկալիստական մի թեորիա, վորն ընդունակ ե միայն բաժան-բաժան անել պայքարի յելած պրոլետարիատի ուժերը: Յեվ այսպես կոչված ձախամոլները և տրոցկիստական ոպովիցիայի բոլոր սխալներն անցյալում, հենց այդ դժովեյին գնում: Նրանք ընդունում եյին «ձախ»

Դիրք, իրենց ցույց տալով վորպես ծայրահեղ  
«ձախ» հեղափոխականներ, փորձում եյին մե-  
դադրել՝ մեր կուսակցությունը տերմիգորիա-  
կանության մեջ, վերասերման մեջ, և ճգնում  
եյին մտցնել իրենց ուղղումները կուսակ-  
ցության քաղաքականության մեջ։

## ՈԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ԱԶ ԹԵՔՈՒՄԸ

Մեր համամիութենական լենինյան կոմ-  
յերիտմիության մեջ ևս տրոցկիզմի այլա-  
ձևություններից մեկը ավանդաբդիզմի այդ  
թեորիան եր։ Տրոցկիստները, ընդունելով  
«ձախ» դիրք, կուսակցությանը անվանում  
եյին վերասերվող և ուսանող յերիտասար-  
դությանը համարում կուսակցության բա-  
րոմետրը։

Մենք հիմա շատ թուռուցիկ կերպով  
քննության առանք կուսակցության և կոմ-  
յերիտմիության մեջ առաջացած թեքում-  
ների ծաղման պատճառները։

Իսկ ոեկոնստրուկցիայի շրջանը անցյալ  
եպոխայից տարբերվող ի՞նչ բնութագրական  
բան ե տալիս:

Ժողովուրդների կուլտուրայի պատմու-  
թյունը յերբեք չի տեսել սեփական շինա-  
րարության և տեխնիքական վերաշինման  
այնպիսի տեմպեր, վորպիսիք մենք դիտում  
ենք կառուցվող սոցիալիզմի մեր յերկրում:

Ուեկոնստրուկտիվ շրջանը — դա սոցիալ-  
տեխնիքական առաջխաղացումների մի ամ-  
բողջ շրջան ե, առաջխաղացումների, վսրոնք  
ամրապնդում են պրոլետարիատի դիրքերը,  
դա — կապիտալիզմը վերջնականապես ար-  
մատախիլ անելու շրջանն ե: Մենք ստեղ-  
ծում ենք մարդկային նոր կաղըեր. մենք  
գաղափարականորեն վերագինում ենք մարդ-  
կանց, տալով նրանց նոր հասկացողություն-  
ներ, նոր տրադիցիաներ, նոր հայացքներ.  
մենք նրանց դարձնում ենք բոյլշեիկներ և  
անցյալի մարդու վրա խաչ ենք քաշում:

Յեթե անցյալում, հին ժամանակներում, մի  
քանի դար սրանից առաջ գոյություն ունե-  
յին պետությունն-կոմունա ստեղծելու մասին  
յերազող ուտոպիստներ, ասլա հիմա մենք  
այդ կառուցում ենք, և այդ կառուցումը  
կատարվում ե այնպիսի տեմպով, վոր մենք  
կյանքում արդեն կարող ենք նկատել այդ  
մերձակա դալիքի — պետությունն-կոմունայի  
առանձին տարրերը։ Վերցրեք համատարած  
կոլեկտիվացման շրջանները, համատարած  
սոցիալիստական սեկտորի շրջանները և մի  
քիչ մտածեք դրա վրա։ Վոչ մի ուտոպիստ,  
վոչ Ռոբերտ Ոուենը, վոչ Սեն Սիմոնը և  
վոչ ել ուրիշ վորեե մեկը անգամ իրենց  
ֆանտազիայի ուժով չեյին կարող նախատե-  
սել այն ամենը, ինչ վոր մենք արդեն կա-  
տարել ենք։ Մենք կառուցում ենք պետու-  
թյունն-կոմունա գիտական ամենանոր տվ-  
յալների հիման վրա։ Մենք այժմ արդեն  
ունենք այնպիսի դեպքեր, յերբ առանձին  
շրջաններում և առանձին կոլիսողներում հա-

Նրայնացված են վոչ միայն արտադրական  
պրոցեսները, այլև մինչև անգամ կենցաղը:  
Չե վոր դա հանդիսանում է ամենակոնկրետ,  
ամենամահացու հարվածը մասնավոր-կապի-  
տալիստական գաղափարախոսության համար:  
Հեռու չե այն որը, յերբ սեփա-  
կանատեր կոչումը դառնալու յե-  
ար համարանքի արժանացող մի հա-  
տուկ անուն: Նրա վրա մատով են  
ցույց տալու, վորակես թանգարա-  
նական մի հազվագյուտություն:  
Դասակարգային պայքարի միջոցով, վերա-  
զենվելով մեքենաներով, ելեքտրականու-  
թյամբ, քիմիայով, մղելով ամենակատաղի  
դասակարգային պայքար, մեր ամբողջ ուժեւ-  
րով սլանում ենք դեպի կոմունիզմ:

Անգամ մանր-բուրժուական տարրերին,  
մանր-բուրժուական ինտելիգենցիային մեր  
կոմունիստական մեքենան սկսում է գաղա-  
փարականորեն և տնտեսապես մանրացնել  
և մարսել:

Հնգամյա պլանը կենսագործելու յենք  
վոչ միայն հաջողությամբ, այլ, ինչպես  
ցույց տվեց առաջին տարին, ունենք բոլոր  
պայմաններն այն իրազործելու չորս տարում։

Հենց այդ բոլորը առաջ ե բերում դա-  
սակարգային պայքարի սրում։ Հենց դրա  
մեջ ե ուեկոնստրուկտիվ շրջանի եալոխայի  
ամբողջ յուրահատկությունը։ Յեվ այդ պայ-  
քարում, այդ սուր և լարված դասակարգա-  
յին պայքարում այժմ մենք ունենք դասա-  
կարգային ուժերի սոցիալական սահման-  
որոշում։ Մենք հարձակվում ենք։ Մենք,  
պրոլետարիատի կուսակցության կամքի  
հսկայական լարումունքում դուրս ենք քշում կա-  
պիտալիզմը՝ իր վերջին ապաստարանից —  
մանր-ապրանքային սեկտորից։ Ահա հենց  
պատմական այդպիսի բեկումների ժամա-  
նակ ե, առանձնապես դասակարգային պայ-  
քարի սրման շրջանում, վոր միշտ առաջ են  
գալիս տատանումներ։ Յերեան են գալիս մի  
ամբողջ շարք՝ իրենց չափերով և նշանա-

կությամբ տակավին յերբեք չտեսնված հա-  
վելյալ դժվարություններ։ Պրոլետարիատի  
և կուսակցության տակավին բավարար չա-  
փով չդաստիարակված խավերը մանր-բուր-  
ժուական կացության ճնշման տակ սկսում  
են տատանվել։ Այդ հանգամանքը շատ հրա-  
շալի կերպով նախատեսել ե ընկ. Լենինը։  
Ահա թե ինչ ե գրում Վլադիմիր Իլյիչն այդ  
հարցի առթիվ, խոսելով ոեվիզիոնիստների  
մասին. «Այն, ինչ այժմ վերապրում ենք,  
հաճախ միայն գաղափարապես, Մարքսին  
թեորետիկորեն շտկելու շուրջը տեղի ունե-  
ցած վեճերը, — այն, ինչ այժմ դուրս ե  
պրծնում պրակտիկայում — բանվորական  
շարժման միայն առանձին մասնակի հար-  
ցերի առթիվ, ինչպես տակտիկական տարա-  
ձայնությունները ոեվիզիոնիստների հետ և  
պառակտումներն այդ հողի վրա, — բանվոր  
դասակարգը ստիպված այդ բոլորը անտա-  
րակույս վերապրելու յե անհամեմատորեն  
ավելի խոշոր չափերով, յերբ պրոլետարա-

կան հեղափոխությունը կսրի վիճելի բոլոր  
հարցերը, յերբ նա կկենտրոնացնի բոլոր  
տարածայնությունները այն կետերի շուրջը,  
վորոնք ամենաանմիջական նշանակություն  
ունեն մասսաների վարքագծի վորոշման  
համար, յերբ նա կստիպի, պայքարի ամե-  
նատաք ժամանակ թշնամիներին ջոկել բա-  
րեկամներից և թշնամուն վճռական հարված  
հասցնելու համար դուրս շպրտել անպետք  
դաշնակիցներին»: (Լենին, հատ. XI, մաս I,  
եջ 61): Մեզ մոտ այդ սուր պայքարի  
իմաստը վոչ այլ ինչ ե, բայց յեթե  
պայքար հանուն մասսաների վար-  
քագծի այս կամ այն ուղղության,  
հանուն մեր դարձացման սոցիալիստական  
պվսավոր գծի:

Ուեկոնստրուկտիվ շրջանին հատուկ յու-  
րատեսակ մոմենտների հիման վրա պրոլե-  
տարիատի և կուսակցության առանձին մա-  
սերում նկատում ենք տատանումներ: Տեմ-  
պերը ահ են քցում—այստեղից շինարարու-

թյան հաջողության չհավատալը, պայքարից  
փախչելը — վորպես հետևանք այդ չհավա-  
տալուն մեր հաղթությանը, խուճապ և շփո-  
թություն շինարարության մասշտաբներից  
ու կապիտուլյացիա դժվարությունների  
առաջ։ Այդ բոլորն ի մի վերցրած առաջ ե  
բերում տատանումներ և ձևակերպում թե-  
քումներ կուսակցության գծից։ Ներկուսակ-  
ցական պայքարի պրակտիկայում, պայ-  
քարի, վոր մղվում ե հանուն կուսակցու-  
թյան ստրատեգիայի դասակարգային կովում,  
հանուն նրա գլխավոր գծի իրականացման, —  
միշտ միմիանց ուղեկցում են յերկու թե-  
քում — աջ և «ձախ»։

Պատմականորեն և թեորետիկորեն յեղել  
ե և լինում ե այնպես, վոր շեշտակի զիգօ-  
զագներում, յերբ կուսակցությանը  
անհրաժեշտ ե մի փոքր նահանջել  
նրա համար, վորպեսզի ուժ հա-  
վաքի թշնամուն վճռական հարված  
հասցնելու համար, այդ ժամանակ,

այդ մոմենտում ավելի ցայտուն կերպով  
յերևան և գալիս «Ճախ» թեքումը (տրոց-  
կիզմը վերակառուցման շրջանում): Յեզ  
ընդհակառակը, յերբ կուսակցությունը  
վճռական հարված և հասցնում  
թշնամուն, ամենից ավելի անկա-  
յուն բոլոր տարրերը, կապիտուլ-  
յանտական տարրերը, աջերը, հան-  
դես են գալիս ավելի մեծ ուժով:

Այդ մենք կարող ենք տեսնել և  
այժմ, յերբ ոեկոնոմուրուկտիվ շըր-  
ջանի պայմաններում, կապիտա-  
լիզմի վերջին դիրքերի վրա վճռա-  
կան հարձակում գործելու պայ-  
մաններում կուսակցության մեջ  
վորովես դլխավորը հանդես յեկավ  
աջ վտանգը: Այդ իհարկե անկարելի  
չե դարձնում աջերի և «Ճախերի»  
բլոկի հնարավորությունը, քանի  
վոր նրանց բնույթը մեկ ե: Սակայն  
սխալ կլիներ նրանց շփոթելը, միմիանց հետ

խառնելը։ Մենք նկատում ենք, վոր ուն-  
կոնստրուկտիվ շրջանի դժվարությունների  
հողի վրա տեղի յե ունենում այ տրամա-  
դրությունների կոնսոլիդացիայի, ամրապնդ-  
ման պրոցես։

Նա, ով կարծում ե, վոր աջերը ջախ-  
ջախված են, նա, ով կարծում ե, վոր յեթե  
մենք ընդունում ենք բանաձևեր, ապա  
դրանով ամբողջ գործը վերջանում ե, նա  
վոչինչ չի հասկանում։

Պայքարն ընդդեմ աջերի պիտք ե ծա-  
վալվի ամեն ուղղությամբ, բոլոր գծերով—  
և գաղափարական գծով, և այ պրակտիկայի  
դեմ պայքարելու գծով։ Աջերն ուժեղ են  
վոչ միայն իրենց քայքայող, կազմալուծող,  
պարտվողական հոգեբանությամբ, իդեոլո-  
գիայով, նրանք ուժեղ են նաև նրանով, վոր  
արդի մարդկային կազմում, այդ թվում և  
յերիտասարդ սերնդի մեջ, ոպորտունիզմի,  
համաձայնողականության, թշնամու առաջ  
նահանջելու տակավին շատ ելեմենտներ կան։

Ահա այդ ելեմենտները, վորոնք թագ-  
նկած են մեր մեջ, ուժեղացնում են աջ  
թեքումը, նպաստում են նրա ծաղկմանը,  
Մտածել, վոր մենք ջախջախել ենք պրակ-  
տիկայում գոյություն ունեցող ոպորտու-  
նիզմը, տակավին վաղաժամ եւ Աջ իդեոլո-  
գիայի դեմ մղվող պայքարում հաջողություն-  
ների կարելի յե հասնել վոչ միայն աջերի  
իդեոլոգիան մերկացնելու միջոցով, այլ և  
միենույն ժամանակ պայքարելով ոպորտու-  
նիզմի յուրաքանչյուր, թեկուղ ամենաչնչին  
կերպով պրակտիկայում յերևան գալու դեմ:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՖՌԱԶԸ ՅԵՎ «ԶԱԽ» ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

Հաճախ ոպորտունիզմի այդ ելեմենտները  
մենք չենք նկատում, այնինչ նրանք մեր  
մեջ գոյություն ունեն: Միթե մեզ մոտ  
քիչ թագնված աջ տրամադրություններ կան:  
Կան և շատ կան: Առաջս և դրված կոմյե-

ըիտ Զենինի նամակը, վոր նա զբում ե իր  
ընկեր Վասիային։ Ահա թե նա ինչ ե զբում։  
«Դու նայիր, ամբողջ ուժերով ականջ դիր,  
թե ինչ ե կատրավում շուրջու։ Հարկավոր ե  
զրկված լինել ականջներից, հարկավոր ե  
մատնիած լինել դարավոր տխմարության,  
վորպեսզի վոչինչ չտեսնել, վորպեսզի չիմա-  
նալ թե ինչ ե կատարվում այժմ։ Ամբողջ  
մարդկությունը շուռ ե տրված հակառակ  
կողմը, շուռ ե տրված գլխի վրա։ Քանի  
գնում ե, այնքան ավելի ուժեղ կերպով ե  
յերկիրը գլորվում խորացվող ճգնաժամի  
մեջ։ Ներքին փոխառություններով հեռու  
չենք գնալու։ Վայուտայի վերջին ժամա-  
նակների զգալի տատանումը, տնտեսական  
դրության վատացման հետևանքն ե։ Յես  
գտնում եմ, վոր անոգուտ չի լինի, յեթե  
ժամանակավորապես թուլացվի (ձեր ուշա-  
դրությունն եմ հրավիրում դրա վրա — Ա. Կ.)  
արտաքին առևտրի մոնոպոլիան։ Դա յերկրի  
արտադրական ուժերի զարգացման խթան

ե հանդիսանալու։ Յեվ հետո, «Առաջ նա-  
յել ավելի շատ սարսափելի յե դառնում,  
քան յետ դիտելը»։

Կոմյերիտ Զենինը գլորվում ե մինչև  
եմիզրանտների իդեոլոգիան, մինչև ուղղակի,  
բացահայտ հականեղափոխությունը։ Այդ  
տրամադրությունները բաց կերպով հանդես  
են գալիս վոչ հաճախ, թեպետ նրանք մեզ  
մոտ քիչ չեն։ Այդ տրամադրությունների  
կըողը հանդիսանում ե թեկուզ սև բանվո-  
րությամբ զբաղվող յերիտասարդությունը,  
ոյուղացիական յերիտասարդությունը, վոր  
նոր հիմա յե գալիս արդյունաբերու-  
թյան մեջ, գյուղական կոմյերիտը, վորին  
այժմ միութենական դիսցիպլինի կարգով  
հրահանգում ենք տալ ավելորդ հացը պե-  
տության ոգտին։ Յերբ կյանքը հարցն այդ-  
պիսի հողի վրա յե դնում, այդ գյուղական  
կոմյերիտը հաճախ դուրս ե գալիս կոմյե-  
րիտմիությունից, միայն թե պետությանը  
չտա մի ավել տոնն հաց։ Այդ պահ մտած,

թաղնված տրամադրությունները . մեզ մոտ  
կան, նրանք շատ են և խնդիրն այն ե,  
վորպեսզի մասսաներին ավելի ուժեղ կեր-  
պով, քան յերբեփցե, վոտքի հանենք՝ պայ-  
քարելու ընդգեմ աջ իդեոլոգիայի, վորպեսզի  
նրանց, մասսաներին, սպառազինենք:

Կ են արոնացնելով գլխավոր կրա-  
կը աջ, բացահայտոպորտունիստա-  
կան թեքման դեմ, կուսակցու-  
թյունը և կոմյերիտմիությունը շա-  
րունակում են պայքարը նաև ընդ-  
դեմ «ձախ» թեքման:

Մեր յերկրի առանձնահատկությունները,  
ինչպիսիքն են՝ ազրարային-ինդուստրիալ-  
քնույթը, գյուղատնտեսության գերակշ-  
ռումը, պրոլետարիատի կազմի սակավա-  
թվությունը և այլն, — ծնում են «հեղափո-  
խականի» առանձին տիպ՝ մանր-բուր-  
ժուական «հեղափոխականի» տիպ:

Ի՞նչն ե ընութագրականը մանր-բուր-  
ժուական տիպի հեղափոխականի համար:

Նա մոմենտի հեղափոխական ե, նա  
բովեցի հերոս ե, նա ընդունակ է իր ուժերը  
ծավալել միայն հեղափոխության ամենա-  
խոշոր վերելքների շրջաններում, նա շատ  
շուտ բռնկվում է և նույնպես ել  
շուտ հանգում։ Մանր-բուրժուական  
հեղափոխականը չի սիրում և չի դիմանում  
սիստեմատիկ, հեղափոխական ու աշխատան-  
քին, նա չի դիմանում հեղափոխության  
առորյա շինարարությանը. այստեղ նա չի  
դիմանում և ի հայտ ե բերում իր ամբողջ ան-  
կայունությունը, փթածությունը, քայքայ-  
վածությունը։ Նա փնթփնթում ե, նվզում  
ե, դեռ ու դեն ե վազում, չի կարող իր  
ուժերը կիրառել, սկսում ե բղավել մեր  
բռնած կուբսի սխալության մասին, զար-  
գացման սխալության մասին։

Միջաղգային հեղափոխության ժամկետ-  
ների ձգձգումը, ուշացումը հաճախ աշխարհ  
և ծնում այդ «ծայրահեղ հեղափոխականին»։  
Նա թե լոզունգ ե տալիս, ասենք, Գեր-

մանիայում, Աեհաստանում, Զի՞նաստանում  
ուղղակի զի՞նված ապստամբություն կազմա-  
կերպելու, թե գլորվում ե մինչև ուղղակի  
կապիտուլյացիան բուրժուազիայի առաջ,  
դասակարգային թշնամու առաջ, նա չունի  
դասակարգային, պրոլետարական վողնաշար,  
նա դժվարություններ չի կարողանում տա-  
նել, նա այդ դժվարություններից խուսա-  
փում ե: Այսաւեղից և նրա ճահճացումը,  
հակումը դեպի ավանտյուրիզմ: Նրան հա-  
առուկ ե միայն քննադատել ամեն ինչ և  
ամեն բան, ավելին անել նա ընդունակ չե:  
Նա ինքն իրեն համարում ե վորպես բարո-  
մետր, վորպես ամենակայունը, ամենահաս-  
տատունը, ամենահեղափոխականը. նա միշտ  
դժվար մոմենտներին հեռանում ե կուսակ-  
ցությունից, սկսում ե նրա դեմ պայքարել  
(տրոցկիստները), կուսակցության գիծը նա  
ընդունում ե պայմանով, նա իր սեփական  
գիծն ունի: Շատ քիչ դեպքերում նա  
միայն կարող ե հանդիսանալ մեր

քաղաքական ուղեկիցը, բայց վոչ  
ավելին։ Կարիք չկա բացատրելու, վոր  
կուսակցության և պրոլետարական դիսցիպ-  
լինի ծանրությունը այդ մանր-բուրժուական  
հեղափոխականի ուժերից վեր եւ նրան հա-  
տուկ ե հասարակական յերեսույթներին և  
դեպքերին մոտենալ վորպես հասարակ ըն-  
թերցող, գրքից վերցրած ցիտատների, ան-  
դիր արած ցիտատների տեսակետից։ Հենց  
նրան ե — մանր-բուրժուական հեղափոխա-  
կանին — հատուկ, կուսակցության գիծը նա-  
յել վորպես ցենտրիստական գիծ։

Ներկա մոմենտում նման տիպի հեղա-  
փոխականներ ծնում ե կատաղած մանր  
բուրժուան, վորը չի դիմանում սոցիալիս-  
տական սեկտորի հարձակմանը։

Մանր-բուրժուական յերկրում ձախ տրա-  
մադրությունները, վորոնք հատուկ են  
մանր-բուրժուային, մեզ մոտ շատ շատ  
են։ Ընդունել տրոցկիզմի ձև նրանց հա-  
մար այժմ վոչ մի հնարավորություն չկա,

վորովհետև տրոցկիզմը հականեղափոխական,  
հակախորհրդային մի յերեսույթ է:

Այդ պատճառով ել այդ «ձախ» տրամադրությունները ստանում են իրենց արտահայտության ուրիշ ձև, ուղղումների ձև, կուսակցության գլխավոր գծի «սահմաններում» վերապահումներ անելու ձև։ Տրոցկիզմը ջախջախված է, բայց դա անկարելի չի դարձնում նրա կրկնությունները, ուցիւցիչները։ Չե վոր տրոցկիզմի մնացորդներ մեզ մոտ կան, նրանք միայն արտահայտվում են, յերեան են գալիս ինչ վոր այլ ձեւըով, քան դա եր 2—3 տարի սրանից առաջ։

Վ. Ի. Լենինը շատ նուրբ, ճիշտ և ուղիղ է բնութագրել Եյությունն այն հեղափոխական ֆռազի, վորին այդքան հաճախ են դիմում ուղղումների ասպետները։ Նա գրում է. «հեղափոխական ֆռազը դառնում է հեղափոխական կուսակցությունների հիվանդություն ամենից շատ այնպիսի հանգա-

մանքներում, յերբ այդ կուսակցությունները պրոլետարական և մանր-բուրժուական ելեմենտների միջև ուղղակի կամ անուղղակի կերպով ստեղծում են կապ, նրանց միացնում են, հյուսում և յերբ հեղափոխական դեպքերի ընթացքը ցույց ե տալիս խոշոր և արագ բեկումներ։ Հեղափոխական ֆռազը հեղափոխական լոգունգների կրկնումն ե՝ առանց հաշվի առնելու այն ոբյեկտիվ հանդամանքները, վորոնք գոյանում են դեպքերի տվյալ բեկման դեպքում, իրերի տվյալ դրության դեպքում։ Լոգունգները հրաշալի յեն, հմայիչ են, արքեցնող են, բայց իրենց տակ վոչ մի հիմք չունեն։ Ահա հեղափոխական ֆռազի եյությունը» (Լենին, հատ. XV, եջ 92)։ Իհարկե, շատ հեշտ ե և կարելի յե ընդունել ամենածայրահեղ ձախ հեղափոխականի դիրք ու բղավել ամեն մի անկյունում։ «Ե՞նչ հիման վրա կոմունիզմը այսոր գոյություն չունի։ Ուղորտունիստներ, ի՞նչու յեք միշտ միայն խոս-

տանում այն, Տվեք այսոր»։ Սակայն չե  
վոր Լենինը գրում ե. «Լոզունգները  
հրաշալի յեն, հմայիչ են, արքե-  
ցնող են, բայց իրենց տակ վոչ մի  
հիմք չունեն»։

### «ԶԱԽԻՍՏՆԵՐԸ»

Հենց «ձախ» թեքման ռեցիդիվի արտա-  
հայտություն են հանդիսանում ընկ. ընկ.  
Շացկինի, Ստենի, Բոբրիշևի, Կոստրովի և  
ուրիշ ընկերների յլույթները։ Սխալ կլիներ  
հարցը պարզացնել և մտածել. «Այդ խմբակը  
փոքր ե, նու՝ ամենաշատը 10 հոգի»։ Բանը  
տասնյակը չե, այլ այն, վոր այդ խմբակը  
մանր-բուրժուական պրոցեսներ ե ընութա-  
գրում, պրոցեսներ, խորթ, ոտար բովան-  
դակությամբ, վորը փորձում ե ճնշում գործ  
դնել մեր կուսակցության վրա։ «Ձախիստ-  
ները, անկախ իրենց կամքից և  
ցանկությունից, սկսեցին հանդի-  
սանալ այդ պրոցեսների արտա-

հայտիչները։ Յեթև այդ չուղղենք, ապա  
վաղն ամբողջապես Տրոցկու գերիներն ենք  
լինելու։

«Ձախ» խոտորման կոնկրետ բովանդա-  
կության մանրամասն անալիզը մեզ համո-  
զում են նրանում, վոր «ձախիստները», անե-  
լով իրենց առաջին անվտահ քայլերը,  
սկսում են իրենց հարձակումները կուսակ-  
ցության գլխավոր գծի վրա նրանից, վոր  
իբր թե ուղում են անմեղ շակումներ անել։  
Շատ բնութագրական են, թե ձախիստներն  
ինչպես են գնահատում կուսակցական կադ-  
րերը։ Նրանց համար հենց բանվոր կուսակ-  
ցականները, վորոնք բավական չափով գրա-  
դեատ չեն, չեն կարող այս կամ այն հարցին  
տալ սերտված, անզիր արած ձեսակերպում-  
ներ, հանդիսանում են արիվատելներ։ Ահա  
թե ինչ ե գրում Շացկինը. «Ի հաճույքս  
կոմունիստական կեղծ բարեպաշտության  
ասպետի, յենթադրենք նույնիսկ, վոր նա  
չի խմում, չի ծխում, չի հայիոյում և մինչև

զառամյալ ծերությունը մնալու յե կույս,  
յենթաղլենք այնուհետեւ, վոր նա վոչ թե  
վախից, այլ հոգով-սրտով նվիրված ե հեղա-  
փոխության, բանվոր դասակարգին, կուսակ-  
ցության, չունի անձնական կյանք և ամ-  
բողջապես նվիրված ե հասարակական աշ-  
խատանքին. և այնուամենայնիվ այդպիսի  
առաքինի, բարեգործ անձը կարող ե դառ-  
նալ և շատ հաճախ դառնում ե կուսակցա-  
կան աբիվատել, անգամ իր թիկունքում  
ունենալով ընդհատակյա ստաժ, աքսոր և  
ուզմանակատներ»: Այդ ասում ե Շացկինը:  
Հիմա հիշեք, թե ինչ եր ասում Տրոյկին  
կուսակցական գվարդիայի առթիվ. «Կուսակ-  
ցությունը վերասերվում ե, չպետք ե վստա-  
հել կուսակցության հին գվարդիային»: Այս-  
տեղ մի կենտրոնական իդեյա յե և համարյա  
թե միևնույն արտահայտությունները: Նրա  
իմաստը միևնույնն ե. «Կադրերը վերասեր-  
վում են, կադրերը մոտենում են իրենց  
վախճանին, մի վստահիր այդ կադրերին»:

Շացկինը բառիս բուն իմաստով արհա-  
մարում ե, բանի տեղ չի դնում այն կու-  
սակցականին, վորը քվեարկում ե հոգուտ  
կուսակցության գծի: Ահա լսեք, թե ինչ ե  
ասում Շացկինը. «Քվեարկումը հոգուտ կու-  
սակցության վորոշման ընդդեմ վորեւ ոպո-  
ղիցիայի նա համարում ե իր ծառայությունը,  
վորը պետք ե ապահովի իր համար աստի-  
ճան կամ պատիվ և ծածկի նրա բոլոր կամա-  
կամա մեղանչումները»: Դա լկտի զրպար-  
տություն ե կուսակցության հասցեյին: Այդ  
փոքր քաղվածքում բավական ցայտունու-  
թյամբ արտահայտված ե «Ճախիստների»  
դժգոհությունը այն դրությունից, վորը գո-  
յություն ունի կուսակցության մեջ: Միթե  
կուսակցությունը յերբեկցե ժխտել և ժխտմա-  
ների մանր-բուրժուական վերասերման հնա-  
րավորությունը: Յերբեք այդ չի ժխտվել:  
Իսկ ինչու յենք բղավում մասաների հետ  
կապ ունենալու մասին, ուժեղացնում այդ

կապերը, ի՞նչու յենք բղավում մասմաների ակտիվացման մասին, կուսակցության ակտիվացման մասին, ի՞նչու յենք կազմակերպում քաղաքական-դաստիարակչական աշխատանքի մի ամբողջ սփստեմ կուսակցության անդամների համար, անցկացնում ինքնաքննադատություն, ներկուսակցական դեմոկրատիա։ Այդ բոլորն արվում են ենց այն նպատակով, վորպեսզի յերեան բերվեն բոլոր տառանվողները, վերասերվողները, քայլայվող և կազմալուծվողները, արիվատելությունը, մեջանականություն անողները, վորպեսզի այդ բոլորը դուրս քշվեն կուսակցությունից, իսկ նրանց, վորոնց կարելի յեվերադաստիրակել-պետք են վերադաստիարակել։ Բայց չեն վոր հայտարարությունը «քվեարկող մեքենաների» մասին արվում են վոչ թե կուսակցության առանձին անդամների վերաբերյալ, այլ ամբողջ կու-

սակեցության վերաբերյալ, Վորպես որինակ  
վերցրեք կուսակեցության բանվորական  
մասը։ Այս, իր գրագիտությամբ նա այն-  
քան ել չի փայլում, դա միանդամայն հաս-  
կանալի յե։ Սակայն չե վոր կուսակեցական-  
պրոլետարը, թեկուզ և նա այնքան ել  
գրագետ չե, չի վեջացրել մարքսիզմի կուր-  
սեր կամ կարմիր պրոֆեսուրայի ինստի-  
տուտը, բայց դրա փոխարեն ունի դասա-  
կարգային զգայնություն, բնաղդ, դասա-  
կարգային ինքնագիտակեցություն, վորը որ  
որի վրա ավելի և ավելի յե ընդլայնվում և  
զարգանում նրա մեջ։ Ախր բացի դրանից  
նա ունի նաև դասակարգային պայքարին  
ակտիվ մասնակցելու փորձ, այսինքն այն  
բոլոր անհրաժեշտ ելեմենտները, վորոնք  
հենց ապահովում են նրան վերասերումից։  
Բացի այդ բոլորից, նա աշխատում ե գոր-  
ծարանում, պրոլետարական շրջապատում,  
յենթարկվում ե արտադրական կարգապա-  
հության, այսինքն ստանում ե այն ամենը,

ինչ ձևակերպում ե բոյլշեխիկ-լենինիստի,  
քաղաքականապես հաստատուն կուսակցա-  
կանի, բովված, կոած և կոփված ընկերոջ,  
վորն ունի դասակարգային մեծ զգայնու-  
թյուն, բնազդ։ Այո, այդ կուսակցականը  
վոչ միշտ ե հասկանում կուսակցության  
քաղաքականության հարցերը, ուղղակի և  
բացահայտորեն պիտի ասել, վոր, նա յեր-  
բեմն քվեարկում ե հոգուտ կուսակցության  
քաղաքականության, առանց պարզելու այս  
կամ այն հարցի բոլոր նրբությունները,  
բայց դա նշանակում ե արդյոք, վոր նա  
արիվատել է։ Բնավ։ Նման հարցերի դեպ-  
քում նա քվեարկում ե վոչ թե վորպես  
արիվատել, այլ վորպես մի մարդ, վորը ձուլ-  
ված ե կուսակցության հետ, վորը այդ  
կուսակցության մեջ անցել ե պայքարի  
դպրոց, վորպես մի մարդ, վորը տեսել ե  
կուսակցությանը գործողության մեջ և այդ  
պատճառով ել հավատում ե նրան։ «Ձա-  
խիստների» դժգոհությունը կուսակցական

ուժիմից, ստիպում ե նրանց առաջ քաշել  
լողունգ՝ կասկածելու իրավունքը ունենալու  
մասին։ Մի դրություն, վոր վերին աստիճանի  
«հեղափոխական» եւ Ամեն վոք, տեսնում  
եք, պետք ե քվեարկի միայն այն ժամա-  
նակ, յերբ նու համոզվում ե, վոր ճիշտ ե:  
Վերին աստիճանի «հեղափոխականորեն»  
ե ասված։ Սակայն կասկածի իրավունքի  
դեկլարացման ամբողջ սխալն անմիջապես  
բացվում ե, հենց վոր կտրուկ կերպով  
հարց ենք դնում — խոսքը կասկածի վոր  
իրավունքի մասին ե։ Ում կասկածելու իրա-  
վունք տանք։ Ի՞նչի մասին կասկածել։ Կաս-  
կածելու իրավունքը և այդ իրավունքի հաս-  
տատումը, ոգտակար ե և ձեռնտու միայն այն  
ելեմենտներին, վորոնք ոպողիցիոն կերպով  
են տրամադրված դեսկի կուսակցության  
գիծը։ Յեվ այդ ոպողիցիոն ելեմենտները  
առաջադրում են «կասկածելու և տատանվե-  
լու իրավունքի» լողունգը հենց նրա համար,  
վորպեսզի պոկեն, բաժանեն մեր կուսակցու-

թյան վորոշ մասը և դրանցով լցնեն իրենց  
ոպողիցիոն տրամադրված շարքերը։ Դա  
փաստ եւ Յեվ կասկածելու իրավունքի պա-  
հանջի իմաստը կայանում եւ լիբերալ վերա-  
բերմունքի մեջ դեպի թեքումները, դեպի  
սխալները մեր կուսակցության շարքերում։  
Սխալ եւ մի տեղ խառնել «աջ» և «ձախ»  
թեքումները։ Սակայն ծայրահեղությունները  
յերբեմն մոտենում և նմանվում են իրար։ Հի-  
շեք Ն.Ն. Մանդեյլշտամի թեորիան թեքման  
իրավունքի մասին։ Դա մոտավորապես սրա-  
նից մի տարի առաջ եր, վոր ընկ. Ման-  
դեյլշտամը պահանջում եր իրավունք տալ  
գլխավոր գծի «սահմաններում» ունենալ  
տատանումներ և թեքումներ։ Այ Մանդեյլ-  
շտամը ավելի լայն չափերով պահանջում  
եր այն, ինչի վրա ներկա պայմաններում  
պնդում եւ «ձախ» Ստենը։ Վորպես տրոց-  
կիզմի ռեցիդիվ, «ձախիստների» մեջ և հատ-  
կապես կարմիր Պրոֆեսուրայի ինստիտու-  
տում մենք հանդիպում եյինք այսպիսի

արամադրությունների. «Զի՞ կարելի արդյոք  
Զինովյեվի և Կամենեվի հանդեպ փոխել քա-  
ղաքականությունը՝ նրանց ղեկավարության  
մեջ քաշելու ուղղությամբ»։ Կոմյերիտմիու-  
թյան և Կուսակցության Կենտկոմները քա-  
նիցս ստիպված են յեղել ուղել «Կոմս.  
Պրավդայի» սխալները։ Ինչ ուղղությամբ  
եյին գնում ինքնաքննադատության հար-  
ցերում տեղի ունեցող այդ սխալները։  
Համ. 1. ԿՅՑԵՄ-յան ԿԿ-ի ողոսառու 8. ի վորոշման  
մեջ ասված ե, վոր մենք հավանություն ենք  
տալիս այն ամբողջ դրական աշխատանքին,  
վոր կատարել ե «Կոմս. Պրավդան» անվախ  
բոյլշեիկյան ինքնաքննադատության ծավալ-  
ման գծով։ Սակայն դա անկարելի չի դար-  
ձնում և սխալների առկայությունը։ Վորոնք  
են այդ սխալները։ Ահա, ասենք, ավարատի  
քննադատումը։ Մենք ատելով ատում և  
տանել չենք կարող բյուրոկրատիզմի, չի-  
նովնիկության, բժության, կազյոնշինայի  
ելեմենտները, վորոնք գոյություն ունեն

մեր ապարատներում և հատկապես պըռփ-  
միությններում, և մենք այդ չարիքի դեմ  
պայքարում ենք։ Սակայն մենք վորպես կազ-  
մակերպություն պայքարում ենք, վորպեսզի  
այդ բոլորը հայտաբերենք և վերացնենք։ Իսկ  
ինչ ե քարողում «Ճախերի» քննադատությու-  
նը ապարատների հարցի առթիվ։ Նա ատելու-  
թյուն ե քարողում հանդեպ մեր ապարատ-  
ների, նա մեր ապարատները փշրելու իդեյան  
ե քարողում, նա մեր ապարատները ջախ-  
ճախելու քաղաքականությունն ե քարողում։

Անցողիկ շրջանի պայմաններում դա վե-  
րին աստիճանի զսասակար բան ե։ Հարկա-  
վոր ե վոչնչացնել, դուրս քշել բյուրոկրա-  
տիզմը, հարվածել այն, յերևան բերել չինով-  
նիկությունը, բթությունը, մասսաներից  
կտրվելը և այլն և այլն։ Սակայն մեր  
ապարատը և նրա հիվանդություն-  
ները մենք պետք ե բուժենք և վոչ  
թե վոչնչացնենք, ջախջախենք այն։  
Մեր ապարատի ջախջախման քաղա-

քականությունը — տրոցկիստների  
քաղաքականությունն եւ ինքնաքննա-  
դատության խնդրում ձախերն այդ բանը  
չեն հասկանում և զարմանալի չե, վոր դրա  
հետեանքով կոմյերիտական մամուլի մի շարք  
աշխատողների մեջ ստեղծվել եր վոչ թե  
պատկորների, այլ «ախտակորների» մի ամ-  
բողջ խումբ, վորոնց ուզում ես հաց ել մի  
տուր, միայն թույլ տուր, թող մի ախտա-  
բուն բաց անեն, վորպեսզի կարելի լինի  
մատները ծծել, ինչով ե բնութագրվում  
«ախտակորների» իդեոլոգիան: Եյապես նրա  
համար բոլորովին նշանակություն չունի ախ-  
տաբնի գոյությունը: Նրա համար կա-  
րեւը ե միայն փաստը և նրա համը  
տեսնելը: Մեզ մոտ «կոմս. Պրավդայի»  
շուրջը ստեղծվել եր ինչվոր առանձնահա-  
տուկ մարդկանց տիպ: Նրանք խոսքի վար-  
պետ են՝ այս կամ այն թերությունը նկա-  
րագրող, այս կամ այն սխալը մտրակող: Իս-  
կապես մեծ վարպետություն ու հմտու-

թյուն ե զգացվում, սակայն մեր շինարարության դրական կողմերի նկարագրելը նրանց ուժերից վեր ե, նրանք այդ գործին ընդունակ չեն, և վոչ միայն նրա համար, վոր փորձառություն չունեն, այլ և նրա համար, վոր նրանք դրան ընդունակ չեն՝ իրենց հայացքների հետևանքով։ Նրանք չեն զգում մեր շինարարության դրական կողմերը։ Նրանք սովոր են լոկ փնթփնթալու, անկյունային խոսակցություններով զբաղվելու և վոչ թե թերությունները հայտնաբերելու և ոգնելու կոմյերիտմիության, կուսակցության, այդ թերությունները հասարակայնություն դարձնելու, կազմակերպելու այդ հասարակայնությունը թերությունները վերացնելու համար (նման տիպը բարեբախտաբար ուժեղ չի տարածված մեր կոմյերիտմիության մեջ և «կոմս. Պրավդա»-ում)։

Վերջին տարիներին մենք ականատեսներ ենք, վկաներ ենք կուսակցության և

կոմյերիտմիության հսկայական թեորետիկա-  
կան աճման։ Այդ աճումը բոլորի համար ակն-  
հայտ եւ։ Այդ արդեն հարկ չկա ապացուցելու.  
այդ մասին ասում եւ կոմվուզերի, կրու-  
ժութիւնների, դպրոցների ընդլայնումը, գրակա-  
նության հրատարակությունը, նրա վորակի  
լավացումը։ Դա պարզ եւ, քայլ ձախերը,  
չնայո՞ծ դրան, ծածկվելով ճոճռան ֆռազ-  
ներով, բղավում են կուսակցության թեոր-  
ետիկական մտքի ճարպակալության մասին։  
Ի՞նչ եւ նշանակում թեորետիկական մտքի  
ճարպակալում։ Յերբ մարդը ճարպակալվում  
է, դառնում եւ դժվարաշարժ, դանդաղեց և  
դրա շնորհիվ ել քիչ ինիցիատիվա, նախա-  
ձեռնություն ունեցող։ Ասել, վոր մեզ մոտ  
նկատվում եւ թեորետիկական մտքի ճարպա-  
կալում կուսակցության կամ կոմյերիտմիու-  
թյան մեջ, դա նշանակում եւ հաստատել և  
պնդել, վոր թեորետիկական տեսակետից մենք  
վոչ թե առաջ ենք գնում, այլ յետ ենք գլոր-  
վում։ Յեվ ահա հիմնովին սխալ այդպիսի

յեզրակացությունը թեորետիկական ճար-  
պակալության մասին, վերջանում ե հետևյալ  
լոգունգով. «Յուրաքանչյուր կոմյերիտ պետք  
ե վերընդունի կուսակցության գլխավոր գիծը  
իր անձնական փորձի պըհիզմայի միջոցով»:  
Ի՞նչ ե նշանակում պնդել, վոր յուրաքան-  
չյուր կոմյերիտ իրավունք ունի կասկածելու և  
ստուգելու կուսակցության գծի ճշտությունը  
իր սեփական փորձով: Իսկ ուր մնաց կու-  
սակցության կոլեկտիվ փորձը, ուր  
մնաց դասակարգի պայքարի փոր-  
ձը: Սա ի՞նչ ձգտում ե, ի՞նչ ճգնում և ի՞նչի  
համար: Դա անձնական փորձը հակառակում ե  
կոլեկտիվ փորձին: Դա հարցի մեր դրումը  
չե: Հարցի այսպիսի դրումը յեւ-  
նում ե այն հաշվից, վորպեսզի կաս-  
կած տարածի կուսակցության գծի  
ճշտության նկատմամբ: Այդ աղայա-  
կան, ինտելիգենտական որիգինալություն  
անելը կուսակցության քաղաքանության մի

ամբողջ շարք խոշորագույն պըռըլեմների հետ,  
մենք պետք ե մեր ամբողջ ուժով ժխտենք:

«Կորչի կուսակցական արիվատելը» իր  
հողվածում Շացկինը պնդում ե, վոր ան-  
հրաժեշտ ե պայքարի նոր ֆրոնտ բացել կու-  
սակցական արիվատելի դեմ: Մենք արդեն  
ասել ենք, վոր կուսակցությունը արիվա-  
տելություն չի ծնում, այլ ընդհակա-  
ռակը, պայքարում ե նրա դեմ, վոր  
արիվատելությունը և կոմունիզ-  
մը — միմիանց գոյությունը ժխտող  
յերկու հակառակ բաներ են, — դա  
ըոլորի համար պարզ և հասկանալի յե: Ի՞նչ ե  
նշանակում պայքարի ֆրոնտ բացել կու-  
սակցական արիվատելի դեմ: Քաղաքականա-  
պես դա նշանակում ե՝ նվաստացրել աջ  
թեքման զաղափարական եյությունը: Գո-  
յություն ունի պայքարի նոր ֆրոնտ — դա  
կուսարիվատելի դեմ պայքարելու ֆրոնտն ե:  
Զախիստները մեղադրում են կուսակցությա-  
նը նրանում, վոր նա պայքարում ե աջերի

դեմ, դաշնակցած աբիվատելյան ճահճի հետ  
և պահանջում են՝ «զատվել կուսակցական  
ճահճից»:

Նշանակում ե նրանք հավատացած չեն,  
վոր կուսակցությունը կարող ե գտնել իր  
մեջ կամք, վորպեսզի հաղթահարի աջ թե-  
քումը։ Նրանց չի բավարարում այն տեմպը,  
վորով մենք պայքարում ենք կուսակցու-  
թյան միջի աջ թեքման դեմ։ Բայ յերե-  
ռութին նրանք ունեն ինչվոր ուրիշ առա-  
ջարկություններ, վորոնք արմատապես փո-  
փոխում են կուսակցության աջ թեքման  
դեմ մղվող պայքարի դրությունը։ Ահա ձեզ  
«Ճախ» խոտորման ցայտուն յերեռութներ։  
Մրանից իննը ամիս առաջ ՀամեկՅԵՄ-յան  
ԿԿ-ի ըյուրոյում քննվում եր այն տրամա-  
դրությունների հարցը, վորոնք գոյություն  
ունեյին Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի  
այսպես կոչված «Ճախիստների» մեջ։ Աջերի  
դեմ պայքարելու այն ետապում կուսակցու-  
թյունը ասում եր. «Գաղափարական պայ-

քար, աջերի մերկացում, պայքար աջ թեքման կոնկրետ արտահայտությունների դեմ»։ «Ձախերը», ինչպես իրենց և հատուկ ե, ասում եյին. «Բնչ ե նշանակում գաղափարական մշակում, բոլորին ել հեռացնել»։ Կուսակցությունը ասում եր «Ճախերին», վոր հեռացնելը հեշտ ե, վոր ավելի կարևորը մասսաներին աջ թեքման գաղափարական եյությունը բացատրելն ե, բացատրելը, թե ինչով ե կործանարար այդ իդելոգիան, այսինքն աջերին հենց իրենց արմատի վրա մերկացնելը։

Իսկ ճախերը գտնում եյին, վոր յեթե կուսակցությունը աջ թեքման գաղափարախոսներին միանգամից չի հեռացնում աշխատանքից, ապա նա աջարար ե պայքարում աջ թեքման դեմ։

### «ԶԱԽ» ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՅԼ ՍԻԱԼՆԵՐԸ

Նմանապես ընկ. Բորբիշել և փորձեց սխալ կերպով կողմնորոշել միությունը։ VI կոն-

ֆերենցիայում նեղ «գործամոլության» հարցի առթիվ նա ասում եր. «Յես սխոլաստիկայով չեմ զբաղվելու, թե վորն ե գլխավորը — աջ թեքումը, թե նրա այլաձեռություններից մեկը (գործամոլություն)»:

Վորն ե գլխավորը։ Մենք ասում ենք, վոր գլխավոր վտանգը աջն ե, իսկ ըստ Բոբրիշևի դա, տեսնում եք, սխոլաստիկա յե։ Կամ ինչպես ե նա գնահատում աստրախանյան գործը։ Նա ասում ե. «Վորովես որինակ վերցրեք Աստրախանը, վորտեղ մենք ունենք ոպորտունիզմի կլասիկ որինակ։ Այնտեղ մենք տեսնում ենք ապարատի լայն ձուլումը չաստնիկի հետ։ Այնտեղ առորյա աշխատանքը համակված ե յեղել նեղ գործամոլական մոտեցումով»։

Բայց միթե աստրախանշինայի դասեցը կայանում են միայն գործամոլության մեջ։ Աստրախանշինան — դա աջ թեքումն ե պրակտիկայում, թեքում, վորը վերածվել եր պրոլետարիատի շահերի ուղղակի դավաճանու-

թյան, իսկ ընկ. Բոբրիշել նրանում միմի-  
այն գործամոլություն է տեսնում,

Շացկինը աղաղակում ե արիվատելի դեմ  
պայքարելու նոր ֆրոնտի մասին, իսկ Բոբրի-  
շել առաջարկում ե վորպես զլխավոր վտանգ  
համարել գործամոլությունը և ճգնում ե  
աջ թեքման դեմ պայքարելը փոխարինել  
գործամոլության դեմ պայքարելով, այսինքն  
փորձում ե անել այն, ինչ անում ե և Շաց-  
կինը, վորը ճգնում ե աջ թեքման դեմ պայ-  
քարելը փոխարինել արիվատելության դեմ  
պայքարելով։ Յերկուսն ել սխալվում են կար-  
ծես թե տարբեր հարցերում, սակայն յեր-  
կուսն ել կաղում են միևնույն «Ճախ» վոտքով։

Խոսքով — կարծես թե դա պայքարի խո-  
րացումն ե ընդդեմ աջերի, իսկ ըստ եյու-  
թյան — աջ վտանգի դեմ պայքարելու քո-  
ղարկումն ե, նրա փոխարինումը՝ գործամո-  
լության դեմ պայքարելով։ Անսահման շփո-  
թում, մոլորվածություն և յեթե կամենում  
եք՝ իսկական գործամոլություն։ «Ճախստ-

ների» դիրքը տարբերվում է կուսակցության գլխավոր գծից և հակառակում է նրան նաև կարևորագույն ուրիշ հարցերում:

Որինակի համար. ընկ. Կրիլովը գրում է.

«Այն գյուղերում, վորոնք միացված են խորհուրդներով, չքավորությունն իրավունք ունի ստեղծելու ինքնուրույն կազմակերպություններ ընտրական որդանով. գյուղերում կազմակերպված չքավորությունը հանձինս իր ընտրական որդանների հավաքվում ե ռայոնային համագումարներում և այնտեղ ընտրում ե իր ռայոնական կենտրոնը»\*:

Նրան համապատասխան կերպով լրացնում ե կոստրովը:

Կոստրովի և Կոֆիլովի առաջարկությունները՝ չքավորության ինքնուրույն լայն կազմակերպություն ստեղծելու մասին, իրենց իրականացման դեպքում հասցնելու եյին վոչ այլ ինչի, բայց յեթե եսերական լողուն-

---

\* «Կոմս. Պրավդա» 27/IV — 1929 թ.

զին գյուղացիական միության մասին։ Մենք  
զիտենք, վոր կուլակը գյուղացիական միու-  
թյունն եւ պահանջում, մենք զիտենք, վոր  
դեպի կուլակը ձգտող հարուստ գյուղացին ևս  
պահանջում եւ ստեղծել այդախսի միություն։  
Նման տրամադրություններ ունի նաև մի-  
ջակների վորոշ մասը։

Տրոցկին և տրոցկիստական ուղղիցիան  
ХV համագումարի առթիվ կազմած իրենց  
հակա-թեղերում առաջարկում եյին ստեղծել  
չքավորության միությունն։ Լենինգրադի ոպո-  
ղիցիան առաջարկում եր ստեղծել գյուղա-  
ցիական յերիտասարդության պատգամավո-  
րական ժողովներ։ «Զախիստների» առաջար-  
կություններից շատ ուժեղ կերպով տրոց-  
կիզմի հոտ եւ փչում, վորովհետև այդ առա-  
ջարկությունները վերցված են տրոցկիզմի  
Զախիստիամած գաղափարական բազամից։

«Զախիստների» հիմնական սխալները գյու-  
ղական հարցում գնում են միջակի վերա-  
դաստիարակության հնարավորությանը չհա-

վատալու և միջակին թերագնահատելու գծով։  
Կուսակցությունը անհրաժեշտ է համարում  
գյուղացիական մանր տնտեսությունների կո-  
լեկտիվացումը և հանրայնացումը, նրանց  
փոխադրումը խոշոր, կոլեկտիվ տնտեսու-  
թյան ռեյլսերի վրա։ «Զախիստները» չեն  
հասկանում այդ խնդիրը, մոռանում են մի-  
ջակին։ Կուսակցությունը լայն աշխատանք  
ե ծավալում գյուղական չքավորության մեջ,  
կազմակերպելով նրան խմբերի մեջ։ «Զա-  
խիստները» բղավում են չքավորության  
ինքնուրույն կազմակերպության մասին, աչ-  
քաթող անելով կուսակցության ղեկավա-  
րության անելիքը — գյուղական չքավորու-  
թյան կազմակերպումը։

Կոմյերիտմիության մեջ թագնված շատ  
ձախ տրամադրություններ կան։ Դա մա-  
սամբ բացատրվում է և յերիտասարդության  
կազմով։ Մենք տակավին չենք սովորել հայ-  
տաբերել այդ թագնված ձախ տրամադրու-  
թյունները, նմանապես դեռ չենք սովորել

բավականաչափ հաջողությամբ պայքարել  
«ձախ» խոտորումների դեմ։ Հիմնական  
դրույթը — պայքար յերկու ֆրոն-  
տում։ Կուսակցությունն իր զլխավոր գիծն  
անցկացնելիս միշտ ել պայքարել ե յերկու  
ֆրոնտում՝ աջ և «ձախ» և, նայած վերապ-  
րած կացության, նայած դասակարգային  
ուժերի հարաբերության մեր զարգացման  
տվյալ ետապում, կենտրոնացրել ե իր հար-  
վածը կամ դեպի աջ կամ դեպի ձախ։ Գլխա-  
վոր խնդիրը այժմ — պայքար ընդ-  
դեմ աջերի, ընդդեմ նրանց իդեո-  
լոգիայի, ընդդեմ նրանց աշխարհա-  
յացքի։ Այժմ խնդիրը վոչ միայն այն ե,  
վորպեսզի զաղափարականորեն բացատրել  
աջ եյությունը, աջից յեկող առաջարկու-  
թյունների քաղաքական սխալները, այլ և  
այն, վորպեսզի պրակտիկայում ևս պայքա-  
րել, արմատախիլ անել, վոչնչացնել ոպոր-  
տունիզմի ելեմենտները։ Յուրաքանչյուր  
կոմյերիտ պետք ե լավ հասկանա և իր հա-

մար պարզի, վոր այժմ բավական չե միայն  
ունենալ ձեական ճիշտ գիծ, այլ անհրաժեշտ ե  
կարողանալ նաև ավելի արագ իրացնել այս  
Անկախ քո կամքից, դու կարող ես ընկնել  
ոպորտունիստների իշխանության ներքո, կա-  
րող ես դառնալ գործիք ոպորտունիստների  
ձեռքում, կարող ես կանգնել ոպորտունիստ-  
ների հանդեպ հաշտվողական վերաբերմունք  
ունենալու ուղու վրա։ Հիմնական հար-  
վածը — դեպի աջ։ Սակայն այդ չի  
նշանակում, վոր մենք պետք ե աշ-  
քաթող անենք հեղափոխական ֆռա-  
զաբանությունը, «Ճախճ խոտոքում-  
ները» Բոլոր նրանք, վորոնք — աջից կամ  
ձախից — փորձում են ուղղել կուսակցու-  
թյանը, — անցած դեպքերի փորձով մատ-  
նված են դաժանագույն պարտության, տա-  
պալման։

Կուսակցության պայքարը յեր-  
կու ֆրոնտում — դա ցենտրիզմ չե։  
Արդի «Ճախճիստները» կուսակցության գիծը

համարում են ցենտրիստական։ Մեր կուսակցությունը պայքարում ե ընդդեմ ոտար, խորթ հայացքների, վորատեղից ել վոր դրանք առաջ յեկած լինեն — «Ճախից» կամ աջից։ Յեվ նա այդ պայքարը մղում ե հանուն մեր զարգացման հստակ, պարզ, պրոլետարական դասակարգային գծի։

«Լենինիզմը ամենաձախ հոսանքն ե համաշխարհային բանվորական շարժման մեջ» (Ստալին)։ Ցենտրիզմը — դա զանազան տեսաենցների, զիջումների, համաձայնությունների բլոկ ե, դա ճգտում ե հարթել, կոկել, իրար կապել միմիանց գեմ գործող ուժերը։ Մեր զիծը հեռու յե ցենտրիզմից այնպես, ինչպես յերկինքը յերկըից։ Նա վոչ թե ցենտրիստական ե, վոչ թե կարկատան, չնչին, աննշան բաների յետերից ընկնող, — այլ մի գիծ ե, վորն ունի ցայտուն կերպով արտահայտված, հատուկ, պրոլետարական՝ կոմունիստական դասակար-

գային եյություն։ Ցենտրիստական զիծը  
հատուկ ե միայն այն կուսակցություններին,  
վորոնք կորցրել են իրենց հեղափոխական  
դեմքը, մոլորվել են հակասությունների մեջ  
և կարողություն չունեն մարքսիստորեն պար-  
ղել այդ հակասությունները, նա հատուկ ե  
այն կուսակցություններին, վորոնք վախե-  
նում են դասակարգերի պայքարի սրումից  
և այդ պատճառով ել դլորվում են կոմպլո-  
միսների գիրկը։ Իսկ մենք — բոյլշևիկների  
կուսակցություն ենք, սոցիալիզմ կառուցող  
պրոլետարիատի կուսակցություն, դասակար-  
գային պայքարի կուսակցություն։

Կոմյերիտմիությունը պետք ե ճիշտ յու-  
րացնի կուսակցության՝ յերկու ֆրոնտում  
պայքարելու լողունքը։ Դա կանխելու յե զա-  
նազան թեքումների և խոտորումների՝ կոմ-  
յերիտմիության մեջ կրկնվելու հնարավո-  
րությունը։ Կոմյերիտմիությունը պետք ե  
ուժեղացնի կուսակցությանը ցույց տված իր  
ողնությունը, ինչպես աջ թեքման, — վորը

հանդիսանում և ներկայումս մեր զարգացման ուղու վրա կանգնած դլխավոր վտանգը, — այնպես ել «ձախ» խոտորումների ջախ-ջախման գործում, խոտորումների, վորոնք հանդիսանում են ուրիշ վոչինչ, բայց յեթե ջարդված և վոչնչացված տրոցկիզմի արձագանքը:

## ՈՒՇՔԻ ՅԵՆ ԳԱԼԻՍ

Այս բրոցյուրի լույս տեսնելու մոմենտին Համեկ (ը) Կե-ը և Համ. ԼԿՅԵՄ-յան Կե-ը ստացան ընկ. ընկ. Ստենի, Շացկինի, Բոբրիշեի, Կոստրովի և ուրիշների դիմումը այն մասին, վոր նրանք ճանաչում և խոստովանում են իրենց հայացքների և այդ հարցերի առթիվ առանձին հոդվածներով մամուլում ունեցած յելույթների սխալականությունը:

Նրանից հետո, յերբ կուսակցական և կոմյերիտական բջիջները ըստ արժանվույն գնահատեցին, իսկ կուսակցական-կոմյերիտական մամուլը մերկացրեց «ձախ» խոտու

բումների եյությունը, ընկերները խոստովանեցին, վոր նրանք իրոք գործել են քաղաքական սխալներ, — սխալներ կուսակցության գծի գնահատման խնդրում, — և վոր այդ սխալները թևավորում եյին արոցկիստներին, ուժեղացնում նրանց:

Նշանակում ե կուսակցությունը իրավացի յեր, յերք նա քաշեց այդ ընկերների փեշերը և դատապարտեց այդ «ձախ» խոտորումները։ Սակայն պետք ե ուղղակի հայտարարել դիմում տված բոլոր ընկերներին, վոր այն փաստով, վոր նրանք ճանաչում և խոստովանում են իրենց սխալները, մեջտեղից տակավին չի վերացվում «ձախ» խոտորումների և կարծեցյալ-հեղափոխական հայացքների դեմ պայքարելու հարցը։

Դիմում տված ընկերները, այժմ կուսակցության հետ միասին պետք ե բացատրեն կուսակցական-կոմյերիտական մասսաներին իրենց թույլ տված սխալների եյությունը, աշխատեն դրանց վերացնելու հա-

մար, կանխեն այդ «ձախ» խոտորումների  
վերստին ծաղման հնարավորությունը,  
վորովհետեւ նման խոտորումների՝  
կոմյերիտմիության մեջ կը կնվե-  
լու հնարավորություն կա: Զպետք  
եւ մոռանալ, վոր այժմ մեր շաբ-  
քերն են վերադառնում նախկին  
տրոցկիստական ելեմենտները, վո-  
րոնք իրենց կազմակերպչական կա-  
պերը խզել են տրոցկիզմի հետ,  
բայց վորոնք վոչ միշտ են լիովին  
հեռացած նրանից, և գաղափարա-  
կանորեն:

Տրոցկիզմը, վոր ջախջախվել ե անցյա-  
լում, կիսատրոցկիզմը, վոր այժմ հանդես ե  
դախս մեր առաջ «ձախ» խոտորումների ձևով,  
հետագայում ևս փորձելու յե, վորպեսզի  
հնարավորություն գտնի ակտիվ կերպով յե-  
րեան գալու այնպիսի ձեերով, վորտեղ մեր-  
կացվելու վտանգն ավելի քիչ ե սպառնալու  
իրեն:

Պետք ե ուղղակի ասել, վոր կոմյերիտները և կոմյերիտական ակտիվը վոչ միշտ են կարողանում իր ժամանակին մերկացնել տրոցկիստական եյությունը նրա յերևան գալու նոր ձևերի մեջ։

Յելնելով այս բոլորից, «Ճախ» խոսումների դեմ պայքարելու լոգունգը, «մանր-բուրժուական ռադիկալ ֆռազաբանության» դեմ պայքարելու լոգունգը չի կարող հանվել կուսակցության և կոմյերիտմիության աշխատանքի որակարգից։

Ուժեղացնել մեր աչալընությունը, յետ մղել տրոցկիստական գրոհները, վորտեղ և ինչպես ել նրանք յերևան գալու լինեն, համակցելով այդ ամբողջ աշխատանքը գլխավոր վտանգի հաղթահարման հետ — աջ թեքման և նրա հանդեպ ցույց տրվող հաշտվողականության հաղթահարման հետ — այս ե մեր անելիքը։

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԿ.


Ն. ԿՈՊՏԵՎ

ԵԵՆԻՆՑԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՔԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏՈՒՄ

Գիրը 25 կ.

ՊԱՀԱՆՁԵՑ  
ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ  
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.  
ԴԻԼԵՎ, Մոսկվա, Նիկոլյսկայա, 10.  
ЦЕНТРИЗДАТ.

2,66



1848 P

18 ЧПМ.  
О. П.

ЗКСМ  
2-Р5

ՄԵԿ  
օրինակ



---


А. КОСАРЕВ  
Комсомол в борьбе  
за линию партии

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С  
Москва, центр, Никольская, 10



[024.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0034807

A-L  
1229

S64  
ophiun